




Map 4



Map 5

ՄԱԼԱԹԻԱՅԻ ԳՐԱԻՈՒՄԸ ՄԱՄԼՈՒՔՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 1315 Թ. ԵՒ ԿԻԼԻԿԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Գագիկ Դանիելյան

Կիլիկեան Հայաստանի եւ Եգիպտոսի ու Ասորիքի Մամլուքեան սուլթանութեան քաղաքական յարաբերութիւնների ուսումնասիրութիւնն անկարելի է առանց ԺԳ.-ԺԵ. դարերի մամլուքեան արաբալեզու (եւ անշուշտ՝ օտարալեզու) պատմագրական յուշարձանների ներգրաւման: Արդ, պատճառը բնաւ միայն հետազոտութեան բազմակողմանիութիւնն ապահովելը չէ, այլեւ ժամանակի հայ պատմագրութեան ցաւալի աղքատութիւնը: Հայ պատմագրական աւանդոյթի՝ տակաւին ԺԱ. դարում սկիզբ առած «Վերածննդի շրջանը» ձգւում է մինչեւ ԺԳ. դարի վերջերը եւ ԺԴ. դարի սկզբները՝ հարստանալով մէկ տասնեակից աւելի պատմագիրների անուններով: Հայ մամլուքեան աւելի քան հարիւրամեայ յարաբերութիւնների առաջին երեք-չորս տասնամեակների պատմութեան ուսումնասիրման համար օգտակար են յատկապէս Վարդան Արեւելցու, Կիրակոս Գանձակեցու, Գրիգոր Ակնեցու, Վահրամ Բաբունու, Սմբատ Սպարապետի, Հեթում Պատմիչի եւ որոշ դէպքերում նաեւ Ստեփանոս Օրբէլեանի երկերը: Կիլիկեան Հայաստանի պատմութեան յետագայ շրջանի համար հայագէտ-պատմաբանի տրամագրութեան տակ մնում են սոսկ մի շարք մանր ժամանակագրական երկեր եւ ձեռագրերի պատմական բնոյթի յիշատակագրութիւններ, որոնց յայտնած տեղեկութիւններով ժամանակաշրջանի մասին լիարժէք պատկերացում կազմելն ուղղակի անհնար է:

Արաբալեզու պատմագրական երկերի յայտնած տեղեկութիւնները Կիլիկեան Հայաստանի պատմութեան ուսումնասիրութիւններում ներառելու անհրաժեշտու-

թիւնը հայագիտութեան մէջ վաղուց է գիտակցուել: Չնայած դրան՝ մամլուքեան պատմագրութեան ուսումնասիրութիւնը եւ մամլուքեան պատմագրական երկերի ներգրաւումը որպէս Կիլիկեան Հայաստանի պատմութեան սկզբնաղբիւրներ հայագիտութեան մէջ դեռեւս ձեւաւորուած աւանդոյթ չունի: Վերջին յիսնամեակում հայ-մամլուքեան յարաբերութիւնների համար կարեւորութիւն ներկայացնող նորանոր արաբական սկզբնաղբիւրների բացայայտման ուղղութեամբ կարեւոր քայլեր են կատարել օտար հետազոտողները: Յաւալի է, որ այդ փորձերը հիմնականում անտեսուած են մնացել հայաստանեան արեւելագիտութեան եւ հայագիտութեան կողմից, եւ ոչորտում հայրենական մասնագէտների աշխատանքը գերազանցապէս յիշեալ ուսումնասիրութիւններից անջրպետուած եւ մեկուսի է կատարուել: Թեմայի վերաբերեալ միակ յաջող փորձը ձեռնարկել է Խորհրդային Հայաստանի արաբագիտական դպրոցի ներկայացուցիչներից Յակոբ Նալբանդեանը: Նա թարգմանել է արաբագիր երեք հեղինակների՝ աշխարհագրագիր Եակուտ ալ Համաւիի, Համայի Այիւբեան կառավարիչ Աբու ալ Ֆիդայի եւ Սալահ ալ Դինի կենսագիր Իբն Շադդազի երկերի՝ հայերի եւ հարեւան երկրների պատմութեան մասին տեղեկութիւններ պարունակող հատուածները¹: Յիշեալ հեղինակներից մեզ տուեալ դէպքում հետաքրքրում է Աբու ալ Ֆիդան, ով մամ-

1 Յ. Թ. Նալբանդեան, Արաբական աղբիւրները Հայաստանի եւ հարեւան երկրների մասին (Եակուտ ալ-Համաւի, Աբու-Ֆիդայ, Իբն Շադդազ), ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1965:

լուքեան պատմագրական աւանդոյթի ներկայացուցիչ է: Նալբանդեանն իր աշխատութիւնն օժտել է հարուստ ծանօթագրութիւններով՝ մեծ տեղ յատկացնելով իրեն յայտնի այլ արաբական սկզբնաղբերներէրից քաղուած վկայութիւնների համեմատական քննութեանը: Նրա գիրքը՝ արաբական աղբերներից քաղուած նիւթով ու հայագիտութեան մէջ ներմուծուած նորոյթներով, մեր օրերում էլ՝ տպագրութիւնից աւելի քան 50 տարի անց, գիտական որոշակի արժէք ունի եւ լայնօրէն օգտագործուած է հայագիտական ուսումնասիրութիւններում: Պէտք է նշել, սակայն, որ աշխատութիւնը գերծ է սխալներից ու բացթողումներից, որոնցից քէներն են շտկուել կամ լրացուել ժամանակի ընթացքում. ընդհակառակը, փոխնիփոխ օգտագործուելով, ամրագրուել են Կիլիկեան Հայաստանի պատմութեան յետագայ հետազոտողների մօտ: Մտադիր չենք այստեղ ընդարձակ զբախօսութեան ենթարկելու աշխատութիւնը. մեր այս ու յետագայ ուսումնասիրութիւններում կ'անդրադառնանք դրա հետ կապուած առանձին հարցերի:

Մեզանում մամլուքեան աղբերները ուսումնասիրութեան հետ կապուած եւ վերը առաջ քաշուած բոլոր խնդիրները ցցուն կերպով տեսանելի են քիչ յայտնի կամ գուցէ շատերի համար անյայտ մի իրադարձութեան դէպքում, որը ներկայացնելու ենք ստորեւ: Խօսքը վերաբերում է 1315 թ. մամլուքների կողմից Մալաթիա քաղաքի գրաւմանը, ինչի մասին հայկական աղբերներում չափազանց քիչ բան կայ: Սրան հակառակ՝ դէպքի մասին հարուստ տեղեկութիւններ են յայտնում մէկ տասնեակից աւելի արաբագիր հեղինակներ՝ բացայայտելով ոչ միայն Մալաթիայի առման պատճառները, այլեւ այն հետեւանքը, որ ունեցաւ արշաւանքը Կիլիկեան Հայաստանի համար: Յատկանշական է, որ արշաւանքի ականատես եւ անմիջական մասնակից է վերոյիշեալ Աբու ալ Ֆիդան,

ուս վկայութիւնը Յ. Նալբանդեանի ծաղկաքաղ թարգմանութիւնից տարօրինակ կերպով դուրս է մնացել²:

Մինչեւ դէպքերի բուն շարադրանքին անցնելը նախ ներկայացնենք տարածաշրջանի քաղաքական ուժերի յարաբերակցութիւնը՝ իրադարձութեան պատմական յետնախորքը ուրուագծելու նպատակով:

Դեռ Հուլիոս իլխանի օրօք մեկնարկած հայ-մոնղոլական ակտիւ դաշնակցային յարաբերութիւնները ԺԴ դարի առաջին տասնամեակում՝ Ղազանի իլխանութիւնից յետոյ, սկսեցին աստիճանաբար խաթարուել: Այս գործընթացի սկիզբը նախանշուեց 1307 թ. տեղի ունեցած խիստ ցաւալի իրադարձութեամբ: Խօսքը Բիլարղու անունով մոնղոլ զօրապետի կողմից «թագաւորահայր» Հեթումի (1289-1307 թթ.՝ ընդհատումներով), հայոց արքայ Լեւոնի եւ մի խումբ այլ ազնուականների դաւադիր սպանութեան մասին է³: Իհար-

2 Յատկանշական է, որ Յակոբ Նալբանդեանի հիմնարար աշխատութիւնը հրատարակուել է նրա մահից (1952 թ.) 13 տարի անց միայն: Այդ մասին տեղեկութիւն կայ թէկուզ «Օտար աղբիրները Հայաստանի եւ հարեւան երկրների մասին» շարքի այդ հատորը եզրափակող ռուսերէն ամփոփման մէջ (տե՛ս էջ 308): Անուանի արաբագետի աշխատանքն իրականում ասարտու տեսքի են բերել եւ հրատարակութեան պատրաստել ԳԱԱ պատմութեան ինստիտուտի եւ արեւելագիտութեան սեկտորի մի խումբ գիտաշխատողներ: Հետեւաբար, գուցէ նրանում տեղ գտած որոշ բացթողումներ եւ անհամապատասխանութիւններ հէնց այս հանգամանքով են պայմանադրուած:

3 Այս արիւնալի միջադէպի պատճառները եւ դրա մասին վկայող հայ ու օտարալեզու աղբիրները բաւական լաւ քննարկուած են հայագիտութեան մէջ: Տե՛ս Գ. Գ. Микаелян, *История Киликийского Армянского государства*, изд. АН АССР, Ереван, 1952, стр. 436-437. Յ. Նալբանդեան, *Արաբական աղբիրները...*, էջ 282-284. С. Mutafian, *La Cilicie au carrefour des Empires*, tome I, Les belles Lettres, Paris, 1988, p. 466-467, նոյնի՝ *L'Arménie du Levant (XIe-XIVe siècle)*, Tome 1, Paris, Les Belles Lettres, 2012, p. 194. Լ. Տէր-Պետրոսեան, *Խաչակիրները եւ հայերը*, հտ. Բ, Պատմա-քաղաքագիտական հե-

կէ, Բիլարղուի արարքն ինքնագլուխ ձեռնարկում էր եւ չէր արտայայտում իրանի մոնղոլական իլխանութիւնների պաշտօնական դիրքորոշումը: Սրա ապացոյցն այն էր, որ իր արածի համար Բիլարղուն հատուցեց կեանքով՝ մահապատժի ենթար-

տագոտութիւն (Հայկական մատենաշար Գալուստ Կիլիկեան հիմնարկութեան), Երեւան, 2007, էջ 368-383. D. Bayarsaikhan, *The Mongols and the Armenians (1220-1335)*, Leiden-Boston, 2011, pp. 205-206: Դէպքն իր արտացոլումն է գտել նաեւ մի շարք արաբալեզու աղբիրներում, որոնց յայտնած տեղեկութիւններն իր մեծագործութեան մէջ փորձել է ի մի բերել Ա. Սոխարտը: Նա օգտագործել է հիմնականում Աբու ալ Ֆիդայի, Մուֆադայի իբն ալ Ֆադայի, Ալ Մակրիզիի եւ Ալ Այնիի (ով լոկ մէջբերում է Բայբարս ալ Մանսուրիին) վկայութիւնները: Տե՛ս A. D. Stewart, *The Armenian Kingdom and the Mamluks: War and Diplomacy during the Reigns of He'tum II (1289-1307)*, Brill, Leiden, 2001, pp. 171-180: Յետագայում հետազոտողը թեմային անդրադարձել է եւս մի յօդուածում, որը գրելիս, բացի յիշեալ աղբիրներից, արդէն ձեռքի տակ ունեցել է Բայբարս ալ Մանսուրիի Zubdat al-fikra երկի բնագիրը եւ պարսիկ մատենագիր Աբու ալ Կասիմ ալ Կաշանիի (կամ Քաշանիի - Գ. Դ.) Tārīḥ-e Ūlgāyū ('Օլջայթուի պատմութիւն') երկը, որը նոյնպէս արժէքատր հաղորդում է պահպանել վերոյիշեալ դէպքերի մասին: Տե՛ս Այնի *The Assassination of King He'tum II: The Conversion of The Ilkhans and the Armenians // JRAS*, vol. 15, № 1, pp. 45-61: Քաշանիի վկայութիւնը տե՛ս al-Qāṣānī, *Tārīḥ-e Ūlgāyū, be-ehemām Mahīn Hambīl*, Tehrān, 2005, §. 77: Հմմտ. Յ. Նալբանդեան, *Արաբական աղբիրները*, էջ 283-284: Հարկ չենք համարում այս յօդուածում կանգ առնել Հեթումի եւ Լեւոնի սպանութեան մանրամասների վրայ: Մեզ յայտնի մուսուլմանական աղբիրներից այս դէպքի մասին հարեւանցի խօսում են նաեւ Ալ Կալիպաշանիի եւ Իբն Խալիկանիի մոնղոլ գորավարին չփոխել ինչու Arafīl է անուանում: Տե՛ս al-Qalqašāndī, *Subh al-a'sā*, §. 5, al-Maṭba'a al-amīriyya, al-Qāhira, 1915, §. 363; Ibn Ḥaldūn, *Al-'Ibar wa-diwān al-mubtada'*, §. 5, al-habar fi ayyām al-'Arab wa-l-Barbar, wa-l-tahqīq Ḥalīl Šihāda wa-Suhayl Zakkār, Dār al-Fikr, Bayrūt, 2000, §. 481: Մեզ յայտնի է այս դժբախտ միջադէպի եւս մէկ մամլուքեան պատմում, որը տակաւին անծանօթ է հայագիտութեանը եւ մամլուքագիտութեանը: Ընդամենը, թեմային մի առանձին յօդուածով անդրադառնալու առիթ կ'ունենանք:

կուելով իլխան Օլջայթուի կողմից: Այնուամենայնիւ, ակնյայտ է, որ հայ-մոնղոլական յարաբերութիւններն այլեւս այն որակն ու բովանդակութիւնը չունէին, ինչ, օրինակ, Հուլիոս, Աբադա կամ Ղազան խաների օրօք: Հայ-մոնղոլական դաշնակցութեան մայրամուտի պատճառներից մէկն այն էր, որ մոնղոլներն արդէն պաշտօնապէս մուսուլման էին եւ փոխել էին իրենց վերաբերմունքը ոչ միայն հայերի, այլեւ առհասարակ քրիստոնեաների նկատմամբ: Սա առաւել քան ցայտուն է ժամանակակից գրչի տողերում, ով իլխան Օլջայթուին քրիստոնեաների նկատմամբ գործադրած հալածանքների պատճառով «նեռ» է անուանում. «...Առաւել բազմացաւ բարկութիւն եւ սաստկացաւ չարութիւն ազգին նետողաց ի վերա մեր՝ ազգիս քրիստոնէից, քանզի ել տղայ հասակաւ այր մին ի Խորասանայ միակնանի, համանման նեռինն, որ գալոցն է, անուն նորայ Խարբանդայ, որ թարգմանի իշու ծառայ, որդի Արղունին որդոյ Հուլայունին»⁴: Ժամանակակիցներից մէկն էլ պարզօրոշ կերպով արձանագրում է. «...յաշխարհակալութեան նետողական ազգին, յորում միահամուռ ամենեքեան ընթացան զհետ ոչընչին եւ գտանին գոչինչ, դարձան ի մոլոր օրէնսն Մահմեդի, որ արձակ ճանապարհաւ տանի ի կորուստ»⁵: Կրօնը վճռական գործօն էր⁶, բայց հայ-մոնղոլական դաշնակցութեան խաթարման պատ-

4 Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ (Նեալայտ՝ ՀԶԹ), ԺԴ դար, կազմեց Լ. Ս. Խաչիկեան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1950, էջ 46:
5 Տե՛ս Այնի տեղում, էջ 41:
6 Մոնղոլների իսլամացման եւ մոնղոլ-մամլուքեան հակամարտութեան հարթման գործում դրա ունեցած նշանակութեան մասին տե՛ս A. F. Broadbridge, *Kingship and Ideology in the Islamic and Mongol Worlds*, Cambridge of University Press, Cambridge, 2008, pp. 64-98; R. Amitai, *Holy war and rapproachment: Studies in the Relations between the Mamluk Sultanate and the Mongol Ilkhanate (1260-1335)*, Brepols, Turnhout, 2013, pp. 63-82.

ճառներն աւելի խորքային էին եւ կապուած էին մոնղոլական իշխանութեան համակարգային ճգնաժամի հետ: Նրա քաղաքական կշիռն ու տնտեսական հզօրութիւնն այլեւս նոյնը չէին, ինչ, օրինակ, Հոլաղուի օրօք, երբ դրուել էին Հայ-մոնղոլական ռազմաքաղաքական զինակցութեան հիմքերը: Օլջայթուն հազիւ կարողանում էր ապահովել սեփական տարածքների պաշտպանութիւնը հարեւան մոնղոլական ուլուսներին եւ, ինչպէս մոնղոլ հետազօտող Դ. Բայրսայխանն է գրում, «Կիլիկիայի հետ գործակցութեան մասին չէր էլ մտածում: Կարելի է ասել, որ այս դաշնակցութեան մէջնա այլեւս ոչ մի օգուտ չէր տեսնում»⁷: Ճիշտ է, 1312-1313 թթ. մի վերջին անգամ Օլջայթուն այնուամենայնիւ փորձեց Ասորիք «վերադառնալ», բայց նրա այդ ձեռնարկումը կրկին անփառունակ վախճան ունեցաւ: Հայոց թագաւորն անձամբ մասնակցութիւն չունեցաւ այդ արշաւանքին, եւ դրանով արդէն ամէն ինչ ասուած է⁸:

7 D. Bayarsaikhan, *The Mongols*, p. 207.

8 Հակառակ հետազօտողների (Գ. Միքայելեան, Կ. Մուրաֆեան, Ա. Յովհաննիսեան, Դ. Բայրսայխան) պնդման, թէ հայերն առհասարակ ոչ մի մասնակցութիւն չեն ունեցել Օլջայթու խարբանայի 1312-1313 թթ. արշաւանքին՝ մասնաբաժնի 1312-1313 թթ. արշաւանքին՝ մասնաբաժնի 1312-1313 թթ. արշաւանքին, մէքերելով իր մի տեղեկատուի վկայութիւնը, այնուամենայնիւ պնդում է, որ «Սսի տէրը» (անուանուած է «պիղծ եւ ստոր», բնագրում՝ *šāhib Sīs al-nağis al-ḥasīs*) հսկայական միջոցներ (փայտ, պարէն, ընտիր անասնաբուս (akādīš), հազարաւոր պայտեր (taṭābīq), ջորիներ, աւանակներ՝ բեռնատրուած ցորենով եւ գարով, պարաններ) ու ֆինանսական օգնութիւն է ուղարկել Ալ Ռահրա բերդամրոցը պաշարած մոնղոլական բանակին «իր վէզիր շէյխ Իսհակ իբն Դիմարի հետ» (ն՝վ է - Գ. Դ.): Աւելին, նոյն իբն ալ Ռահրարին շարունակում է, որ այս օգնութիւնից եօթ օր անց ժամանել են նաեւ հայերի օժանդակ ուժերը՝ 15 հրամանատար (որոնց անուններն անգամ մէկ անգամ մէկ թուարկում է)՝ իրաքանչիւրը «50 անիծեալ հայի հետ՝ խաչակիր դրօշի ներքոյ» (taḥta ṣanğāq al-ṣalīb): Յատկանշական է, որ դատելով նշուած հրամանատարների անուններից՝ նրանց մի

Հեռոն Գ.ի եւ Հեթումի սպանութիւնից յետոյ Հայոց գահին նստեց վերջինիս եղբայրը՝ Օշին Ա.ն (1308-1320 թթ.): Նրա գահակալութեան առաջին տարիները համեմատաբար խաղաղ ընթացք ունեցան: Այդ մասին է վկայում թէկուզ այն փաստը, որ մամլուքեան աղբիւրներում այս շրջանի համար խիստ նուազում են Կիլիկեան Հայաստանին վերաբերող վկայութիւնները: Արդի արաբ պատմաբան Շաուքաթ Ռամադան Հուլջան սրա պատճառ է համարում այն, որ Հեթում Բ.ի մահից յետոյ Հայերը սկսում են քիչ թէ շատ կանոնաւոր կերպով վճարել իրենց երկրի վրայ դրուած հարկերը⁹: Սա դուցէ եւ ընդհանուր առմամբ ճիշտ է, քանզի, օրինակ, Ալ Մակրիզին 1308-1311 թթ. իրազարձութիւնների շարադրանքում ընդամէնը երկու անգամ է յիշում Հայերին, երկու դէպքում էլ՝ նկարագրելով հարկերով եւ թանկագին նուէրներով («ոսկեծոյլ տարայ՝ պատուած թանկագին քարերով», «ոսկեծոյլ տարայ եւ մի յախճապակէ կուժ՝ թանկագին քարերով պաճուճազարդ») մամլուք սուլթանի արքունիք ներկայացած «Սսի դեսպաններին»¹⁰:

մասը լատին են եղել, թէեւ նրանցից եւ ոչ մէկի ինքնութիւնը հաստատապէս պարզելու հնարաւորութիւն կարծես թէ, չուներք. Sir Mīdūm (*), sir Kalyām (*), Sahrağ (*), Bāsīl, (Վասիլ), Yahyā ibn Dāqir (*), Bulus (Պոդոս), Ġirğīs (Գերոս), Ibn Marīma (*), Ġarīh (*), Barṣūmā (*), Sarkīs (*, բնագրում իրականում Sarlīs է), Barṭulmā [i]bn Qarqār (*), Lūqān (գուցէ Ղուկաս), Dawīb (*), Ṣalīb ibn 'Aṣṣār (*), Kūrā (*), Sidūm (*): Տէ՛ս **Ibn al-Dawādārī**, *Kanz al-durar wa-ğāmi' al-ğurar*, ց. 9, bi-tahqīq Hāns Rūbirt Ruymir, 1960, al-Qāhira, ց. 253-255: Մամլուքեան ոչ մի այլ փոխակալ Ալ Ռահրայի պաշարմանը հայերի մասնակցութեան վերաբերեալ այս հաղորդումը չի պահպանել: իբն ալ Ռահրարիի վկայութեամբ՝ Օշինը 1313 թ. նաեւ աջակցել է Օլջայթուին Ոսկէ Յորդայի խան Տոկտայի դէմ պայքարում: Տէ՛ս նոյն տեղում, ց. 273.

9 **Šawkat Ramaḍān Ḥuğğa**, *al-‘Ālāqāt bayna Dawlat al-Mamālīk al-ūlā wa-Dawlat Ilhāniyya fāris fi ‘ahd al-sulṭān al-Zāhir Baybars*, 648-736 h. / 1250-1335 m., ‘Amān, 2011, ց. 375.

նախորդ բարեացակամութիւնը չահելու եւս մի առիթ փնտրեց: Ըստ Ալ Նուվայրի պատմիչի՝ այդ թուականին Ոսկէ Յորդայի խան Տոկտայի (կառ. 1291-1312 թթ.) մօտ ուղարկուած մամլուք բանագնացները (որոշ մոնղոլ բանագնացների հետ ընդհանուր թուով մօտ 60 հոգի) յետգարձի ճանապարհին գերի ընկան Փրանկներին: Նրանց վաճառելու նպատակով տեղափոխեցին Միջերկրականի ծովեզրեայ շրջաններ: Նախ տարան Տրիպոլի, որտեղ նրանց զիմաց պահանջեցին 60 հազար դինար, բայց գնորդ չգտնուեց: Ապա տեղափոխեցին Կիլիկիոյ Այաս նաւահանգիստ, որտեղ «Սսի տիրոջն» առաջարկեցին այդ գնով փրկագնել մուսուլմաններին, բայց վերջինս հրաժարուեց¹³: Ըստ Ալ Մակրիզիի պատու-

- 10 Տէ՛ս **al-Maqrīzī**, *Kitāb al-sulūk li-ma‘rifat duwal al-mulūk*, ց. 2.1, bi-tahqīq Muḥammad Muṣṭafā Ziyāda, al-Qāhira, 1941, ց. 43, 86: Տէ՛ս նաեւ **Baybars al-Manṣūrī**, *Zubdat al-fikra fī tāriḥ al-ḥiğra, bi-tahqīq Dunāld Rīṣārdz*, Bayrūt, 1998, ց. 402, 413, ինչպէս նաեւ նոյնի՝ *Kitāb al-Tuḥfa al-mulūkiyya fī al-dawla al-turkiyya, bi-tahqīq ‘Abd al-Ḥamīd Sāliḥ Ḥamdān*, al-Dār al-Miṣriyya al-Lubnāniyya, al-Qāhira, 1987, ց. 193; **al-Nuwayrī**, *Nihāyat al-arab fī funūn al-adab*, ց. 32, bi-tahqīq Ibrāhīm Šams al-Dīn, Dār al-Kutub al-‘Ilmiyya, Bayrūt, 2004, ց. 102.
- 11 Սուլթան Ալ Նասիրի կառավարման երրորդ շրջանին նուիրուած առանձին ուսումնասիրութիւն կայ: Տէ՛ս **A. Levanoni**, *A turning point in Mamluk history: The third reign of al-Nāṣir Muḥammad ibn Qalāwūn (1310-1341)*, E. J. Brill, Leiden, 1995.
- 12 **Al-Maqrīzī**, *al-Sulūk*, ց. 2.1, ց. 86: Այնուամենայնիւ, միւս արաբալեզու աղբիւրների հետ համեմատութիւնից եզրայանգում ենք, որ իրականում ամէն ինչ այնքան հարթ չի եղել, ինչպէս Ալ Մակրիզին է ներկայացնում իր այս վկայութեան մէջ: Բայրարս ալ Մանսուրին իր al-Tuḥfa երկում գրում է, որ 710 թ. Հալէպ ներկայացած հայ դեսպանները սահմանուած հարկը մասամբ էին բերել, ինչը զայրացրել է սուլթանին, եւ նա հրամայել է Հալէպի «փոխարքայ» Ասանդամուր Քուրջիին նոր արշաւանք կազմակերպել դէպի Կիլիկիա: Տէ՛ս **Baybars al-Manṣūrī**, *al-Tuḥfa*, ց. 217-218: Ըստ **al-Maqrīzī**, *al-Sulūk*, ց. 2.1, ց. 90-91; **Ibn Tağrī Birdī**, *al-Nuğūm al-zāhira fī mulūk Miṣr wa-l-Qāhira*, ց. 9, bi-tahqīq Muḥammad Ḥusayn Šams al-Dīn, Dār al-kutub al-‘ilmiyya, Bayrūt, 1992, ց. 21-22: Հայոց արքան, ինչպէս երևում է, այդ մասին իմաստով, շտապել է ուղարկել հարկի մնացած մասը: 1311 թ. Համայի փոխարքայութիւնը ստանձնած Աբու ալ Ֆիդան հաստատում է, որ ինքը ստացել է իր մասնաբաժինը («ջորիներ եւ կերպասեղէն»): Տէ՛ս **Abū al-Fidā’**, *Kitāb al-Muḥtaṣar fī aḥbār al-baṣar*, ց. 4, al-Maṭba‘a al-Ḥusayniyya al-Miṣriyya, al-Qāhira,

նախորդ բարեացակամութիւնը չահելու եւս մի առիթ փնտրեց: Ըստ Ալ Նուվայրի պատմիչի՝ այդ թուականին Ոսկէ Յորդայի խան Տոկտայի (կառ. 1291-1312 թթ.) մօտ ուղարկուած մամլուք բանագնացները (որոշ մոնղոլ բանագնացների հետ ընդհանուր թուով մօտ 60 հոգի) յետգարձի ճանապարհին գերի ընկան Փրանկներին: Նրանց վաճառելու նպատակով տեղափոխեցին Միջերկրականի ծովեզրեայ շրջաններ: Նախ տարան Տրիպոլի, որտեղ նրանց զիմաց պահանջեցին 60 հազար դինար, բայց գնորդ չգտնուեց: Ապա տեղափոխեցին Կիլիկիոյ Այաս նաւահանգիստ, որտեղ «Սսի տիրոջն» առաջարկեցին այդ գնով փրկագնել մուսուլմաններին, բայց վերջինս հրաժարուեց¹³: Ըստ Ալ Մակրիզիի պատու-

1907, ց. 65 (Յ. Նալբանդեան, *Արաբական աղբիւրները*, էջ 246): Իսկ Ալ Իւնիսի պատմիչի երկում՝ հիշրայի 711 թ. տակ, մէկ այլ վկայութիւն ենք գտնում հարկերով կահիրէ շտապող հայկական դեսպանութեան մասին՝ յաւելեալ անհասանակաւ ու յօրհանձին տեղեկութեամբ. «Ռաքի առաջին ամսի երեքին Դամասկոս հասան Սսի տիրոջ դեսպանները, Սսի տիրոջ քրոջ եւ նրա հօրեղբոր դստեր հետ, որպէսզի սուլթանի մօտ յարեմ մտնեն («, ընդգծումը մերն է - Գ. Դ.)՝ իրենց հետ տանելով ձիեր, ջորիներ, նուէրներ, ընծաներ եւ այլն, եւ յայտնեցին նշուած թշնամու (մոնղոլների») շարժի մասին»: Տէ՛ս **al-Yūnīnī**, *Dayl Mirāt al-zamān (Tāriḥ al-sanawāt 696-711 h./1297-1312 m.)*, ց. 2, bi-tahqīq Ḥamza ‘Abbās, Abū Ḥabīb, 2007, ց. 1430: Ըստ **al-Birzālī**, *Al-Muqtafi li-tāriḥ al-šayḥ Sīhāb al-Dīn Abī Šāma al-ma‘rūf bi-tāriḥ al-Birzālī*, ց. 4, bi-tahqīq ‘Umar ‘Abd al-Salām Tadmūrī, al-Maṭba‘a al-‘Aṣriyya, Ṣaydā-Bayrūt, 2006, ց. 13 (ընդգծումը հատուածը բացակայում է):

13 Ի վերջոյ, գերիներին տեղափոխում են Էգէլեան ծովի Ալ Մասուաքա կղզի (Քիոս): Այս մասին իմաստով՝ սուլթան Ալ Նասիրը կարգադրում է ձերբակալել Ալեքսանդրիայում գտնուող ֆրանկ վաճառականներին եւ ազատել նրանց ունեցումները: Բանն աւարտում է նրանով, որ Sakrān անունով մի շեմովացի վաճառականի միջնորդութեամբ մուսուլման դեսպանները վերադարձում են Եգիպտոս, որից յետոյ ազատ են արձակում նաեւ Ալեքսանդրիայի լատին վաճառականները: Տէ՛ս **al-Nuwayrī**, *Nihāya*, ց. 32, ց. 132: Ալ Նուվայրիի պատմածը նոյնութեամբ կրկնում է

մի՝ սուլթանին մուսուլման դեսպանների գերեզմարտության մասին յայտնել է հինգ հայոց արքան, եւ այն մասին, որ «ինքը 60 հազար դինար է ուղարկել նրանց փրկագնելու համար, որպէսզի այդ կերպ ձեռք մեկնի սուլթանին, սակայն չեն կարողացել [նրանց ազատել]»¹⁴:

Մամուլքների հետ յարաբերութիւններում հաստատուած յարաբերական դադարը հնարաւորութիւն էր՝ վերականգնելու տարիներ շարունակ մոնղոլների վարած պատերազմների եւ մամուլքների պատասխան արշաւանքներից մեծապէս բզկտուած տնտեսութիւնը: Հարկաւ, երկրի ներքաղաքական կացութիւնն այդ հնարաւորութիւնը լիարժէքօրէն իրացնելու միայն նուազ յոյսեր էր տալիս: Օչին Ա.ը շարունակեց Հեթում Բ.ի արեւմտամէտ քաղաքականութիւնը՝ պետութեանն ու հայոց եկեղեցուն կանգնեցնելով երկպառակութեան նոր մարտահրաւէրների առաջ: Մամուլքների ոտնձգութիւնները Կիլիկեան Հայաստանի նկատմամբ վերսկսուեցին 1315 թ.՝ Մալաթիայի դէմ ուղղուած արշաւանքի ընթացքում եւ դրանից յետոյ:

Մինչեւ ԺԴ դարի սկզբները հայահարձ Մալաթիան աշխարհագրօրէն եւ քաղաքական առումով մաս էր կազմում Իկոնիայի կամ Ռումի սելջուկեան սուլթանութեան: Մոնղոլների վասալութիւնն ընդունած լինելով դեռ 1243 թ. Քէօսեղաղի (Չմանկատուկի) ճակատամարտից յետոյ՝ արդէն 1270-ական թուականների վերջերից սկսած, Ռումի սելջուկներն ընկան Իրանի մոնղոլական Իլխանութեան անմիջական տիրապետութեան տակ: Սելջուկ

ճառ Մուֆադդալ իբն Աբի ալ Ֆադաիլը: Տե՛ս Mufaḍḍal ibn Abī al-Faḍā'il, Al-Nahḡ as-sadiḍ wa-durr al-farīd fimā ba'da tāriḥ ibn al-'Amīd (Moufazzal ibn Abil-Fazail, Histoire des sultans mamlouks, Texte Arabe publié et traduit en Français par E. Blochet // Patrologia Orientalis, t. 20, Paris, 1929 (լեւսայտի՝ Mufaḍḍal, Al-Nahḡ as-sadiḍ), թ. 199 [705].

14 Al-Maqrīzī, al-Sulūk, ց. 2.1, թ. 101-102.

սուլթանների իշխանութիւնը երկրում դարձաւ գերազանցապէս խորհրդանշական: ԺԴ դարի սկզբներից ծայր առած՝ պետութեան երկարամեայ քայքայումը հասաւ իր տրամաբանական վերջաբանին: 1303 թ. իլխան Ղազանն իր դէմ խռովութիւն բարձրացնելու պատճառով սպանեց սելջուկ սուլթան Քալկուբազ Գ.ին (կառ. 1298-1303 թթ.) եւ նրա փոխարէն գահին նստեցրեց Մասուդ Բ.ին (կառ. 1284-1296 թթ. եւ 1303-1306 թթ.): Վերջինս նախկինում մէկ անգամ արդէն եղել էր իլխանութեան ղեկին, բայց նոյն՝ Իլխանութեան դէմ ապստամբութիւն բարձրացնելու մեղադրանքով հեռացուել էր իլխանութիւնից: 1306 թ. Ղազանի յաջորդ Օլջայթու իլխանը Ռում ուղարկեց Հրենջին (Իրինջին) անունով մի էմիրի, ով ամբողջութեամբ իր ձեռքը վերցրեց իլխանութիւնը երկրում՝ վերջ դնելով Ռումի Սելջուկեան սուլթանութեան գոյութեանը: Սելջուկեան կենտրոնական իլխանութեան բացակայութիւնը յանգեցրեց նրան, որ պետութեան փլատակների վրայ ձեւաւորուեցին մոնղոլահպատակ թիւրք-թուրքմէնական մի շարք մանր իլխանութիւններ կամ բէլլիքներ, որոնք գտնուում էին Ռումում վերատեսուչ նշանակուած մոնղոլ զօրապետների վերահսկողութեան ներքոյ: 1311 թ. Իկոնիայի գործերի տնօրինութիւնը վերոյիշեալ Հրենջինից խլեց իլխանութեան ռազմական վերնախաւի ամենաազդեցիկ էմիրներից Չոբանը (կամ Չուփանը, իմա՝ «հովիւ»)՝¹⁵, ով կրում էր ulus amīr-ի («պե-

15 Էմիր Չոբանի գործունէութեանը եւ Իլխանութեան ներքաղաքական գործընթացներում նրա ունեցած դերին մի քանի յօդուած է նուիրել Չ. Մելվիլը: Տե՛ս Ch. Melville, Abū Sa'īd and the revolt of the amirs in 1319 // L'Iran face a la domination mongole, études réunies et présentées par D. Aigle, pp. 89-120, նոյնի՝ Wolf or shepherd?: Amir Chupan's attitude to government // The court of the Il-khans 1290-1340, edited by Julian Raby & Teresa Fitzherbert, Oxford University Press, Oxford, 1996, pp. 79-93, նոյնի՝ The Fall of Amir Chupan and the Decline of the Ilkhanate, 1327-

տութեան էմիր») բարձր տիրոջսը, եւ յանձնեց իր որդի Թամուրթաշինը¹⁶: Ահա այսպիսի քաղաքական իրավիճակ էր տիրում տարածաշրջանում Մալաթիայի արշաւանքի նախօրէին:

Այսպիսով, սկսեց հայկական աղբիւրներից: Սամուէլ Անեցու շարունակողներից մէկը մեզ հետաքրքրող իրադարձութիւնը սխալմամբ դրել է 1313 թ. տակ՝ գրելով. «Յայսմ ամի առաւ մայրաքաղաքն Մելիտենի ի Հայոց եւ ի Հագարացոց եւ խոտոր գերութեամբ վարեցան յեգիպտոս»¹⁷: Մէկ այլ ձեռագրում հաղորդումը գտնուում է ճիշտ տեղում՝ ՉԿԴ (1315) թուականի ներքոյ¹⁸:

Մելիտինէի գրաւման մասին հաղորդմամբ է սկսուած ԺԴ դարի մի անանուն հեղինակի «Դարձեալ այլ պատմութիւն խաներոյ տաճկաց» վերնագիրը կրող կարճառօտ ժամանակագրութիւնը. «Ի թուին ՉԿԴ ի մայիսին եկն Շամին հեծելն եւ էառ զՄէլիքինի եւ սպան բազում եւ տարաւ գերի»¹⁹:

Հայ մատենագրութեան մէջ Մալաթիայի առման մասին վերջին վկայութիւնը գտնուում ենք ՉԿԵ (1316) թուականին Երուսաղէմում գրուած մի ճաշոցի յիշատա-

1337: A Decade of Discord in Iran, Bloomington, 1999.

16 St'u C. Cahen, La Turquie pré-ottomane (Varia Turcica VII), Institut Français d'Etudes Anatoliennes, Istanbul, 1988, p. 293-294 եւ M. Hope, Power, Politics, and Tradition in the Mongol Empire and the Ilkhanate of Iran, Oxford University Press, Oxford, 2016, p. 189.

17 Սամուէլ Անեցի եւ շարունակողներ, ժամանակագրութիւն, աշխատասիրութեամբ Կ. Մաթեոսեանի, «Նաիրի», Երեւան, 2014, էջ 273:

18 Տե՛ս նոյն տեղում, ծմթ. 555, էջ 430 եւ հմմտ. Գարեգին Ա. Կաթողիկոս Յովսէփեան, Յիշատակարանք ձեռագրաց, հտ. Ա՝ (Ե դարից մինչեւ 1250 թ.), Տպարան Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ, Անթիլիաս, 1951, էջ 530:

19 Մանր ժամանակագրութիւններ XIII-XVIII դդ. (լեւսայտի՝ ՄԺ), կազմեց Վ. Ա. Յակոբեան, հտ. Ա, ՀՄՍԻ ԳԱ հրատ., Երեւան, 1951, էջ 110:

կարանում. «Գրեցաւ ի թագաւորութեան Հայոց Աւշնի եւ ի հայրապետութեան Տէր Կոստանդեա. ի դա՛ռն եւ յանբարի ժամանակս զի չէ կար ումէք ընդ գրով արկանել զազգի ազգի վիշտս եւ զնեղութիւնս, որ հասեալ է ընդհանուր ի վերայ ամենայն քրիստոնէից յանաւրէն եւ յանաստուած պիղծ եւ գարշելի ազգէն Իսմայէլի՝ որ զամենեսեան մաշեցին ի սուր սուսերի եւ զմնացեալսն ի գերութիւն վարեցին, որ եւ սոյն ամին զմեծանուն մայրաքաղաքն Մելիտենի Հայոց առին յաւար եւ ի գերութիւն եւ զայլ բազում քաղաքս եւ զգաւառս եւ զանմատչելի ամրոցս հիմնիվեր տապալեցին»²⁰:

Ինչպէս տեսնում ենք, վերոյիշեալ հայկական աղբիւրներն էական ոչինչ չեն հաղորդում Մելիտինէի գրաւման մասին: Մինչդեռ արշաւանքի մանրամասների մասին Մամուլքեան սուլթանութեան կողմից յայտնուած են մէկ տասնեակից աւելի արաբագիր հեղինակներ եւ Իլխանութեան կողմից՝ մէկ պարսիկ պատմագիր: Հաշուի առնելով այն հանգամանքը, որ յիշեալ հեղինակներից արշաւանքի ժամանակակից, ականատես եւ միաժամանակ անմիջական մասնակից է միայն Աբու ալ Ֆիդան՝ յետագայ շարադրանքում նրա վկայութիւնը մեզ համար հիմնական ուղեցոյց կը վերցնենք, իսկ միւսների հաղորդումները կը քննենք զուգահեռաբար՝ Աբու ալ Ֆիդայի պատմումում անհրաժեշտ լրացումներ կամ ճշտումներ կատարելով²¹:

20 Նորայր եպս. Պողարեան, Մայր Յուցակ Ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հտ. Բ, Երուսաղէմ, 1967, էջ 302բ:

21 Մելիտինէի ամման մասին Աբու ալ Ֆիդայի վկայութեանը իրենց հետազոտութիւններում տարբեր առիթներով հարեւանցի աղբարտարձել են ճառ Լ. Հովորթը (H. H. Howorth, History of the Mongols from the 9th to the 19th century, Part III (The Mongols of Persia), Longmans, Green and Co., London, 1880 p. 570), Ս. Լա Պորտան (S. La Porta, The Armenian Episcopacy in Mamluk Jerusalem in the Aftermath of the Council of Sis

Այսպէս, Համայնի փոխարքայ Աբու ալ Ֆիդան իր «Մարդկութեան Համառօտ պատմութիւն» երկում հիշրայի 715 թ. տակ գրում է. «Այս տարում Մուհամմադ ամսի 22-ին (1315 թ. ապրիլի 27) կիրակի օրը, գրաւուեց Մալաթիան: Դրա պատ-

(1307) // Journal of the Royal Asiatic Society, vol. 17.2, 2007, pp. 9-10), Դ. Կորոբեյնիկովը (D. Korobeinikov, A Greek Orthodox Armenian in the Seljukid Service: the Colophon of Basil of Melitina // Mare et litora: Essays Presented to Sergei Karpov for his 60th Birthday, ed. by R. Shukurov, Indrik, Moscow, 2009, pp. 720-721), Ք. Ռաֆայելը (K. Raphael, Muslim Fortresses in the Levant: Between Crusaders and Mongols, Routledge, 2011, p. 115): Յատկանշական է, որ դէպքերի ժամանակակից է նաեւ մամլուքեան մէկ այլ խոշոր պետական գործիչ Բայբարս ալ Մանսուրին, ով մշտապէս յարգի պաշտօններ է գրադէցրել Սուլթանութեան արքունիքում, իսկ 1311/1312 թ. որոշ ժամանակով գրադէցրել է Եգիպտոսի փոխարքայի (nā'ib al-saltana) բարձր պաշտօնը, որ Սուլթանութեան պաշտօնէական աստիճանակարգութեան մէջ երկրորդն էր սուլթանից յետոյ: Կարճ ժամանակ անց, սակայն, ձերբակալուել է եւ հինգ տարի անցկացրել բանտում: Նրա Zubdat al-fikra եւ al-Tuhfa al-mulukiyya երկերը ականատեսի տեղեկութիւններ են պարունակում Ալ Մանսուր ալ Կալաուն, Ալ Աշրաֆ Խալիլ, Հուսամ ալ ղիմ Լաջին եւ Ալ Նասիր Մուհամմադ սուլթանների կառավարման շրջանների վերաբերեալ: Բայց ցաւօք, այս երկերից առաջինի մեզ հասած օրինակն աւարտում է 1309/1310 թ., երկրորդը՝ 1311/1312 թ. իրադարձութիւնների շարադրանքով: Ինքը՝ հեղինակը, Մալաթիայի գրաման տարում՝ 1315 թ., դեռ բանտարկուած էր Քարաքի միջնաբերդում: Բայբարս ալ Մանսուրի կենսագրական տուեալները տե՛ս Little D., An introduction to Mamlūk historiography: an analysis of Arabic annalistic and biographical sources for the reign of al-Malik an-Nāṣir Muḥammad ibn Qalā'ūn (Freiburger Islamstudien, Bd. II.), Franz Steiner Verlag, Wiesbaden, 1970, pp. 4-5; Sh. M. Elham, Kitbugā und Lāḡin: Studien zur Mamluken-Geschichte nach Baibars al-Manṣūrī und al-Nuwayrī, Klaus Schwarz, Freiburg, 1977, S. 13-19; E. Ashtor, Baybars al-Manṣūrī // EI2, vol. 1 (A-B), E. J. Brill, Leiden, 1986, pp. 1127-1128; L. S. Northrup, From slave to sultan: The career of al-Manṣūr Qalāwūn and the consolidation of Mamluk rule in Egypt and Syria (678-689 A. H./1279-1290 A. D.), Franz Steiner Verlag, Stuttgart, 1998, p. 38.

ճառն այն էր, որ տեղի մուսուլմանները խառնամուսնական յարաբերութիւններ էին հաստատում քրիստոնեաների հետ, եւ անգամ քրիստոնեայ տղամարդուն թոյլ էին տալիս ամուսնանալ մուսուլման կնոջ հետ: Եւ նրանք (իմա՛ քաղաքի մուսուլմանները – Գ. Դ.) անգամ չէին խորշում թաթարների հետ համակեցութիւնից եւ նրանց տեղեկութիւններ էին տալիս մուսուլմանների մասին»²²: Արշաւանքի մասին պատմող բոլոր արաբագիր հեղինակները չէ, որ բացատրում են այս ռազմական ձեռնարկման պատճառները: Աբու ալ Ֆիդայի պատմւր բացառութիւններից մէկն է: Շարունակելով՝ նա նաեւ ներկայացնում է մի միջադէպ, որը մամլուքեան իշխանութիւններին վերջնականապէս կանգնեցրել է սուլթանութեան սահմանադրին եղած Մալաթիան նուաճելու մտքի վրայ: Նա գրում է. «Իսկ Հռոմկլա, Բեհեսնա, Քախթա, Քարքար եւ այլ ամրոցներում գտնուող զօրքերն ու հետեւակը անընդհատ յարձակում էին գործում թշնամական երկրների վրայ, ինչպիսին որ Ռումի երկիրն էր, եւ նրանց ճանապարհը շատ դէպքերում անցնում էր Մալաթիայի մօտով: Մի անգամ այնպէս պատահեց, որ Մալաթիայի բնակիչները յարձակուեցին եւ յաղթեցին այդ ասպատակիչների մի խումբ մուսուլմաններին»²³:

22 Տե՛ս Abū al-Fidā', Kitāb al-Muḥtaṣar, ց. 4, ց. 74: Յատկանշական է, որ Իբն ալ Վարդի պատմիչը (մահ. 1349 թ.) համառօտագրութիւն է գրել Աբու ալ Ֆիդայի պատմութեան համար (հազուադէպ շեղումներով եւ յաւելումներով), որին կցել է 1309-1348 թթ. ընդգրկող իր «Շարունակութիւնը»՝ Tatimmat al-Muḥtaṣar fi tāriḥ al-baṣar («Մարդկութեան համառօտ պատմութեան լրացում») վերնագրով: Այս հեղինակն իր երկում շատ հարեւանցի է ներկայացնում Մալաթիայի արշաւանքը՝ առանձին անդրադարձի արժանի մկրտամասնութիւններ չհաղորդելով: Տե՛ս Ibn al-Wardī, Tatimmat al-Muḥtaṣar fi aḥbār al-baṣar, ց. 2, al-Qāhira, 1868, ց. 263: 23 Տե՛ս Abū al-Fidā', Kitāb al-Muḥtaṣar, ց. 4, ց. 74.

Արշաւանքի պատճառներն իր Kitāb al-sulūk երկում դոյզն-ինչ այլ կերպ է ներկայացնում ԺԵ. դարի արաբ պատմագիր Ալ Մակրիզին (մահ. 1442 թ.)²⁴: Նա վկայում է. «Մալաթիայի արշաւանքի պատճառն այն էր, որ Մասեաբի²⁵ ժողովը-

24 Ալ Մակրիզիի Kitāb al-sulūk li-ma'rifat al-duwal wa-l-mulūk-ը («Հարստութիւնների եւ արքաների հետ ծանօթացման ուղիների գիրք») երկար ժամանակ բացառիկ աղբիւր է համարուել Մամլուքեան սուլթանութեան՝ ոչ միայն հեղինակին ժամանակակից շրջանի, այլ անգամ պետութեան առաջին տասնամեակների պատմութեան ուսումնասիրութեան համար: Սակայն, մամլուքեան Աորանը աղբիւրների ի յայտ գալով՝ Kitāb al-sulūk-ը աստիճանաբար վերաբնօրոնուել է երեսն եւ եկել հեղինակի պատմագրական մեթոդի թերութիւնները: Արդի մամլուքագիտութեան մէջ Արան ուղղում ամենատարբերապէս վերաբերում է իր օգտագործած աղբիւրները պատշաճ կերպով չլիզելու կամ թաքցնելու եւ իրենից առաջ ապրած հեղինակների վկայութիւնները համառօտելու, համադրելու ու վերաշարադրելու Արա տարօրինակ սովորութեանը, որը դժուարացնում է Արա աւանդած շատուշատ հաղորդումների արժանահաւատութեան ստուգումը: Դ. Լիթլի, Ռ. Ամիտայի, Ս. Մասուդի եւ այլոց ջանքերով սպառնուել է, որ Բահրի մամլուքների եւ Բուրջի մամլուքների վաղ շրջանի պատմութիւնը շարադրելիս Արա համար առանցքային աղբիւր է ուղեցոյց է ծառայել Իբն ալ Ֆուրաքի (մահ. 1405 թ.) Tārīḥ al-duwal wa-l-mulūk երկը: Տե՛ս D. Little, An Introduction, pp. 77-78; R. Amitai-Preiss, Al-Maqrīzī as a Historian of the Early Mamluk Sultanate (or: Is al-Maqrīzī an Unrecognized Historiographical Villain?) // Mamluk Studies Review, vol. 7.2, pp. 99-118; S. G. Massoud, The chronicles and annalistic sources of the early Mamluk Circassian Period, E. J. Brill, Leiden-Boston, 2007, pp. 49-53: Այս հեղինակը, ի տարբերութիւն Ալ Մակրիզիի, խիստ հետեւողական է իր ձեռքի տակ եղած աղբիւրները յղելու եւ դրանց հաղորդումները օգտագործելու հարցում: Բայց յատկանշական է, որ Tārīḥ al-duwal-ի բոլոր մասերը չէ, որ հասել են մեզ: Այդպէս եւ կորած է Մալաթիայի առումը պարփակող մասը, ինչը դժուարացնում է Kitāb al-sulūk-ի ու միւս մամլուքեան աղբիւրների հաղորդումների փոխկապակցուածութեան ճշտումը: 25 Կոչուած է նաեւ Maṣyād, Maṣyāf կամ Maṣyāt: Բերդաքաղաք է կենտրոնական Ասորիքում՝ Համայնի արեւմտեան կողմում: ԺԲ. դարի կէսերից

դից մի խումբ մահապարտ մարտիկների (բնագրում՝ al-fidāwiyya) էր ուղարկել Կարսսենկուրին սպանելու նպատակով: Բայց յայտնուեց քրդերից մի մարդ՝ Մանդուհ անուկով, ով մատնեց սուլթանի հետախոյզներին (quṣṣād)՝ նրանցից մի խմբի ձերբակալելով: Սա յայտնի դարձաւ սուլթանին, ով ձեռնամուխ եղաւ այդ հարցով զբաղուելուն»²⁶: Ալ Մակրիզիի յիշատակած Կարսսենկուրը (լրիւ անունը՝ Շամս ալ Դին Աբու Մուհամմադ Կարսսենկուր ալ Զուկանդար ալ Մանսուրի) սուլթան Ալ Նասիրի փոխարքան էր Հալէպում: Սակայն 1311 թ. նրա եւ սուլթանի յարաբերութիւնները սրուում են. նա մեղադրուում է ասորիքեան մի շարք էմիրների (ի մասնաւորի՝ Դամասկոսի էմիր Ակուշ ալ Աֆրամի) հետ ձեռք բերած համաձայնութեամբ մամլուքեան կենտրոնական իշխանութեան դէմ խռովութիւն բարձրացնելու մէջ: Ալ Նասիր Մուհամմադը վճռում է ձերբակալել նրան, բայց Կարսսենկուրը, զգալով վտանգը, փախչում է սուլթանութիւնից եւ ասպատան գտնում թշնամական երկրի՝ Իլխանութեան արքունիքում, որտեղ լաւ ընդունելութեան է արժանանում Օլջայթուի եւ յետագայում նաեւ վերջինիս որդու՝ Ա-

պատկանում էր իսլամի շիա ուղղութեան իսմայիլական ճիւղի մի աղանդի ներկայացուցիչներին, ովքեր յայտնի էին թմրամիջոցների (մասնաւորապէս՝ հաշիշի, որտեղից գալիս է Արանց haššā-šiyūn անունը) ներգործութեամբ մարտ վարելու իրենց սովորութեամբ եւ ունէին մահապարտ ռազմիկների համբաւ: Միայն ժԳ. դարի կէսերը հաշիշիների կենտրոնական յենակետն էր համարում Ալամուս բերդը, որը 1256 թ. գրաւուել էր Հուլադու խանի կողմից: 26 Al-Maqrīzī, al-Sulūk, ց. 2.1, ց. 142-143: Հմտ. Ch. Melville, 'Sometimes by the sword, sometimes by the dagger': The role of the Isma'ilis in Mamlūk-Mongol relations in the 8th/14th century // Mediaeval Isma'ili history and Thought, ed. by Farhad Daftary, Cambridge University Press, 1996, pp. 251-252:

բու Սաիդի կողմից՝ որդեգրելով Ակսուն-կուր անունը²⁷:

Վերոբերեալից պարզ է, որ Աբու ալ Ֆիդայի եւ Ալ Մակրիզիի պատմաները, տարբերութիւններ ունենալով Հանդերձ, այնուամենայնիւ, մի ընդհանուր գիծ ունեն: Բացառուած է, որ Համայի կառավարչի յիշատակած ասպատակիչների թւում իլխանութեանը ենթակայ տարածք են մտել նաեւ Կարասունկուրի Հետքերը փնտրող *fidāwiyya* մարտիկները, որոնք, սակայն, ձախողել են եւ քուրդ Մանդուհի կողմից մատնուել մոնղոլների ձեռքը: Այս դէպքում երկու պատմիչների հաղորդումները գուցէ ոչ թէ հակասում, այլ փոխլրացնում են իրար, մանաւանդ որ Ման-

դուհի մասին իր յետագայ շարադրանքում Աբու ալ Ֆիդան նոյնպէս տեղեկութիւններ է յայտնում:

Աբու ալ Ֆիդան այսպէս է շարունակում. «Երբ սա պատահեց, սուլթանը վիթխարի մի զօրք ուղարկեց Եգիպտոսից էմիր Սայֆ ալ Դին Բաքթամուր ալ Աբուբաքրիի առաջնորդութեամբ, նրա հետ՝ Սայֆ ալ Դին Կուլլիին եւ Սայֆ ալ Դին Ուլ-Թիմուրին»²⁸:

Դէպքերի մասին վկայող միւս մամուլքեան աղբիւրների հետ համեմատութիւնը ցոյց է տալիս, որ արշաւանքին մասնակից եգիպտացի էմիրները վեցն են եղել: Մասնաւորապէս, ըստ Ալ Նուվայրիի (մահ. 1333 թ.) եւ Իբն ալ Դաւադարիի (մահ. 1335 թ.), եգիպտական զօրքն Ասորիք են առաջնորդել Սայֆ ալ Դին Բաքթամուր ալ Աբուբաքրին, Սայֆ ալ Դին Կուլլին, Սայֆ ալ Դին Սանջար ալ Ջամակդարը, Բադր ալ Դին Մուհամմադ Իբն ալ Վազիրին, Ռուքն ալ Դին Բայբարը՝ սուլթանի սենեկապետը (բնագրում՝ *al-hāḡib al-nāṣirī*), Սայֆ ալ Դին Արաքթամուր ալ Ջամդարը²⁹: Սրանք բոլորն էլ հազարապետ էմիրներ (*muqqadam alif*) էին, ուստի հեծելազօրի թուաքանակը պէտք է որ մօտ 6 հազար լինէր: Այս տրամաբանութեամբ զպտի Մուհամադալ Իբն Աբի ալ Ֆադալիլը (մահ. 677. դարի երկրորդ կէսին), թէեւ բոլոր էմիրների անունները էէ, որ յիշատակում է, բայց հարկ է համարում նշել, որ զօրքի ընդհանուր թուաքանակը 6 հազար էր³⁰:

Յատկանշական է, որ Ասորիք շարժուելու սուլթանական հրամանն արձակուել է դեռ 1315 թ. փետրուար-մարտ ամիսներին՝ ըստ Ալ Նուվայրիի հիշրայի 714 թ. Ջու ալ Հիջլա ամսում (1315 թ. մարտ),

28 *Abū al-Fidā'*, *Kitāb al-Muḥtaṣar*, ց. 4, ց. 74.
29 Ġamḍār-ը սուլթանի հանդերձանքի համար պատասխանատու պաշտօնեան էր:
30 *Mufaḍḍal*, *Al-Nahğ as-saḍīd*, ց. 749 [243].

27 Այս դէպքերի մասին տե՛ս նաեւ W. W. Clifford, *State formation and the structure of politics in Mamluk Syro-Egypt, 648-741 A.H./1250-1340 C. E.*, V&R Unipress, Bonn University Press, 2013, pp. 184-190, ինչպէս նաեւ՝ *Ibn al-Suqqā'ī, Tāīl Kitāb wa-wafayāt al-a'yān, bi-tahqīq Ġāklīn Subla, Dimaşq, 1984, ց. 180* եւ յատկապէս *al-Şafadī, Kitāb al-Wāfi bi-l-Wafayāt*, ց. 24, *bi-tahqīq Aḥmad al-Arnā'ūt wa-Turkī Muştafā, Dār ihyā' al-turāt al-'arabī, Bayrūt, 2000, ց. 159-166*, որտեղ ներկայացում է նրա ամբողջական կենսագրութիւնը: Ալ Սաֆադիին հաստատում է, որ սուլթան Ալ Նասիրը քանիցս մահապարտ հաշաշիների է ուղարկել՝ Կարասունկուրի գոնելու եւ սպանելու նպատակով, բայց բոլոր մահապարտները ձախողուել են: Ըստ կենսագրի՝ Կարասունկուրը մահացել է հիջրայի 728 թ. Օսուալ ամսին (1328 թ. օգոստոս/սեպտեմբեր) Մարադայում (Իրանական Ասորպատակում): Տե՛ս նոյն տեղում, ց. 166: Կարասունկուրի դէմ Ալ Մալիք ալ Նասիրի կազմակերպած մահապարտների մասին իր յայտնի ուղեգրութեան մէջ պատմում է նաեւ մաղրիբցի ճանապարհորդ Իբն Բատտայի: Ըստ նրա՝ Ալ Մալիք ալ Նասիրը, պայմանաւորութիւն է ձեռք բերել իլխան Աբու Սաիդի հետ՝ վերջինիս դէմ ապստամբած եւ Եգիպտոսում ապստամած էմիր Դամուրուաշի (Թամուրթաշի՝ Չոբանի որդու) որդու գլխի դիմաց պահանջելով Կարասունկուրի գլուխը: Վերջինս, վախենալով, որ Աբու Սաիդն իրեն կը յանձնի սուլթանին, թոյն խմելով՝ ինքնասպան է եղել: Տե՛ս *Rihlat Ibn Baṭṭūṭa, bi-tahqīq Muḥammad 'Abd al-Mun'im al-'Iryān wa-murāğā'at Muştafā al-Qaşşāş, Dār Ihya' al-'ulūm, Bayrūt, 1987, ց. 94-95.*

իսկ Իբն ալ Դաւադարիի Ջու ալ Կադա ամսի 22-ին (1315 թ. փետրուարի 27): Երկու պատմիչների տուած ամսաթուերի հակասութիւնը հարթուում է Անանուն մամուլք հեղինակի պատմածով, ըստ որի՝ զօրապետներից Սայֆ ալ Դին ալ Աբուբաքրին, Բադր ալ Դին ալ Վազիրին եւ Սայֆ ալ Դին Արաքթամուրը Կահիրէից դուրս են եկել Ջու ալ Կադա ամսի 28-ին՝ հինգշաբթի օրը (մարտի 6), իսկ միւս երեքը՝ Ջու ալ Հիջլա ամսի սկզբին՝ շաբաթ օրը (մարտի 8)³¹:

Դէպքերի յետագայ ընթացքը պարզելու համար կրկին նախ դառնանք Աբու ալ Ֆիդային. «Երբ նրանք դէպի Դամասկոս շարժուեցին, սուլթանն Ասորիքի բոլոր զօրքերին պատուիրեց, որ նրանց հետ շարժուեն, եւ բոլորի վրայ հրամանատար նշանակեց Դամասկոսի սուլթանական փոխարքայ էմիր Սայֆ ալ Դին Թանքիզ ալ Նասիրիին: Սուլթանի հրամանն առաջինն ինձ հասաւ, որ պատրաստեմ Համայի զօրքը՝ նրանց միանալու համար, իսկ ես անձամբ մնամ Համայում: Բայց յետոյ աւելի օգտակար համարեց, որ ես էլ Համայի զօրքի հետ ուղեւորուեմ: Այդպէս յիշեալ զօրքերի հետ ճամփայ ընկայ»³²: Ջորաբանակների շարժի մասին յաւելեալ տեղեկութիւններ է տալիս ալ Նուվայրին. «[Ապա] նա գրեց Ասորիք, որ էմիր Սայֆ ալ Դին Թանքիզը ճանապարհ ընկնի Ասորիքի զօրքով եւ առաջնորդի ամբողջ զօրքը: Վերջինս զօրակոչեց Ասորիքեան բանակները եւ հրամայեց, որ դուրս գան: Ասորիքեան զօրքի ձախակողմեան թեւը

(*maysarat al-'askar al-Şāmī*) ճամփայ ընկաւ Ջու ալ Հիջլա ամսի 27-ին (1315 թ. ապրիլի 3), իսկ աջ թեւը (*māymanat al-'askar al-Şāmī*) [նոյն ամսի] 28-ին՝ ուրբաթ օրը (ապրիլի 4): Եգիպտական զօրքն [այդ] ամսի 29-ին՝ շաբաթ օրը (ապրիլի 5), հասաւ Դամասկոս»³³: Դամասկոսցի պատմիչ Ալ Բիրզալին (մահ. 1339 թ.) վկայում է, որ Մուհամմադ ամսի 1-ին՝ երկուշաբթի օրը (ապրիլի 7), «սուլթանական փոխարքայ էմիր Սայֆ ալ Դին Թանքիզը եւ բոլոր նրանք, ովքեր հետ էին ընկել Դամասկոսի զօրքից, ուղղութիւն վերցրին դէպի Հալէպ»³⁴, որտեղ պիտի միանային Ասորիքեան միւս՝ քաղաքների՝ Սաֆադի, Հոմսի, Համայի, Տրիպոլիի զօրքերին: Ալ Նուվայրին աւելացնում է, որ Թանքիզը Դամասկոսից դուրս եկաւ թմբուկների ձայների ներքոյ իր շքախմբի հետ, «ինչպէս յարիր է արքաներին», իրեն ուղեկից վերցնելով գերագոյն կադի (բնագրում՝ *qāḍī al-quḍāt*, այն է՝ «դատաւորների դատաւոր») Նաջմ ալ Դին Սասրային, Շարաֆ ալ Դին Իբն Ֆադլ Ալլահին եւ մի խումբ գրագիրների (կամ նօտարների՝ *ḡamā'a min al-muwaqqi'in*)³⁵: Իբն Հաբիբը (մահ. 1377 թ.) նոյնպէս յիշատակում է Թանքիզի այս երկու ուղեկիցներին՝ բացատրելով, որ յիշեալ Շարաֆ ալ Դին Աբդ ալ Վահհաբ Իբն Ֆադլ Ալլահ ալ Ումարին Դամասկոսի արքունական դիւանատան գլխաւոր քարտուղարն էր՝ դիւանապետը (*ṣāhib dīwān al-inṣā'*)³⁶, ում մասին դեռ կը խօսենք ներքեւում:

Որոշ լրացումներ է պարունակում նաեւ Իբն Բասիրի (մահ. 1373 թ.) պատու-

31 K. V. Zetterstéen, *Beiträge zur Geschichte der Mamlükensultane in den Jahren 690-741 der Hıgıra nach arabischen Handschriften* (յետայսու պայմանակաւորէն կ'անուանենք *al-Mu'allif al-mağhūl*, այն է՝ «Անանուն հեղինակ»): Հեղինակը մասնաւորապէս պատմութեան արդի հետազոտողների շրջանում յայտնի է որպէս *Author Z'* երկի հրատարակչի՝ Է. Չետտերստայնի անունով), E. J. Brill, 1919, ց. 162.
32 *Abū al-Fidā'*, *Kitāb al-Muḥtaṣar*, ց. 74-75.

33 *Al-Nuwayrī, Nihāya*, ց. 32, ց. 167.
34 *Al-Birzālī, al-Muqtafi*, ց. 4, ց. 177.
35 *Al-Nuwayrī, Nihāya*, ց. 32, ց. 167-168.
36 *Ibn Ḥabīb, Tağkirat al-nabīh fi ayyām al-Manşūr wa-banīhi*, ց. 2, *bi-tahqīq Muḥammad Muḥammad Amīn wa-bi-murāğā'at Samīr 'Abd al-Fattāh 'Aşūr, al-Hay'a al-mişriyya al-'āma li-l-kitāb, al-Qāhira, 1982, ց. 65.*

մը, որտեղ ասուում է. «Դուրս եկան Հեծե-
լավաշտերն իրենց դրօշներով՝ երեւան հա-
նելով, ինչ սարքաւորումներ եւ պատե-
րազմական գործիքներ, որ ունեն: Դա, յի-
րաւի, յիշարժան օր էր: Զօրքի Հետ [ճամ-
փայ] ելաւ նաեւ իբն Սասրան, որովհետեւ
նա զօրքի կազին էր եւ շաֆիական գերա-
գոյն կազին»³⁷:

Աւելի ինքնատիպ է Ալ Մակրիզիի
պատումի շարունակութիւնը, որում ակ-
նարկ կայ նաեւ Աբու ալ Ֆիդայի մասին.
«Թանքիզը ունէր արքայական հանդեր-
ձանք, [փառահեղ] գինանշաններ³⁸ եւ ու
(բնագրում՝ *al-kūṣāt*)³⁹, ինչը նախկինում
փոխարքայի սովորութեան մէջ չկար:
Նրան հետեւեցին Սաֆադի, Հոմսի, Համա-
յի եւ Տրիպոլիի զօրքերը: Երբ էմիր Թան-
քիզն անցնում էր Համայով, նա խուսա-
փեց նրանից, որովհետեւ վերջինս նրան
չէր դիմաւորել հեռուից, եւ ոչ էլ կերաւ իր
համար պատրաստուած ճաշից»⁴⁰: Ալ
Մակրիզիի ներկայացրած այս միջադէպը
մի քիչ կասկածելի է, քանի որ ըստ Ալ
Նուվայրիի էմիր Թանքիզը Հալէպ է հասել
«Մուհարամ ամսի 12-ին՝ ուրբաթ օրը
(ապրիլի 18) եւ Ալ Մալիք ալ Մուալեադ Ի-
մադ ալ Դիմը՝ Համայի տէրը (իմա՝ Աբու ալ

Ֆիդան, ընդգծումը մերն է - Գ. Դ.), եւ
միւս փոխարքաները, զօրահրամանատար
էմիրներն ու միւս բոլորն ի նշան ծառա-
յութեան իջան ձիերից՝ նրան դիմաւորե-
լու»⁴¹: Յամենայնդէպս, ինքը՝ Աբու ալ
Ֆիդան, Հալէպ ժամանելու մասին իր եր-
կում այսպէս է գրում. «Մենք զօրքերի մե-
ծաթուղեան պատճառով Հալէպ մտանք
հինգշաբթի օրը եւ ուրբաթ օրը՝ [հիշրայի
715 թ.] Մուհարամ ամսի 13-ին (1315 թ.
ապրիլի 18)⁴² [այսինքն] երկու օրուայ ըն-
թացքում»⁴³:

Աբու ալ Ֆիդան եգիպտական եւ ասո-
րիքեան արդէն միացեալ զօրքերի յետա-
գայ տեղաշարժի որոշ մանրամասներ է
հաղորդում, որ չենք հանդիպում միւս
մամուլեքեան պատմիչների մօտ. «Ապա
Հալէպից շարժուեցինք դէպի Այնթաբ, ա-
պա դէպի Մարզուքեան գետը, յետոյ՝ Ռա-
բան, յետոյ դէպի Կապոյտ գետ (*al-Nahr
al-Azraq*) եւ անցանք նրա վրայով հոռո-
մական [գետանց] կամուրջի միջոցով՝
պատրաստուած տաշած քարով, որի նմանն
ըստ մեծութեան երբեք չէի տեսել: Ան-
ցանք՝ մեր աջ կողմում թողնելով Հիսն
Մանսուրը, շրջուելով դէպի հիւսիս: Հա-
սանք մի լեռան ստորոտի, որտեղ ապաս-
տանեցինք մի իջեւանատանը, որ կոչուում
էր «Կամար ալ Դինի իջեւանատուն» (*ḥān
Qamar al-Dīn*): Ապա անցանք մի կապան,
որ այս երկրների բնակիչների լեզուով
կոչուում է *Tuṣuq Dara*-ի (*Tuṣuq Darā*) լեռ-
նանցք: Կապանի նեղութեան եւ դժուա-
րանցանելիութեան պատճառով զօրքը եր-

37 Ibn Kaṭīr, *Al-Bidāya wa-l-nihāya*, ց. 18, bi-tahqīq
'Abd Allāh ibn 'Abd al-Muḥsin al-Turkī, Dār
Haṣar, al-Qāhira, 1998, ց. 142.
38 Բնագրում՝ 'aṣā'ib (եզակի թում՝ 'iṣāba): Եզրոյթի
բացատրութիւնը գտնում ենք Ալ Կալկաշանիի
Ṣubḥ al-a-ṣā երկում: Ըստ նրա՝ 'iṣāba-ն «նսկա-
յական զինանշան էր դեղին մետաքսից՝ ոսկով
դրուագուած, որի վրայ գրում էին սուլթանի
տիտղոսներն ու անունը»: Տե՛ս *al-Qalqaṣandī*,
Ṣubḥ al-a-ṣā, ց. 4, ց. 8:
39 Բնագրում՝ *al-kūṣāt* (եզակի թում՝ *kūṣa*): Նշա-
նակութիւնը կրկին պարզ է շնորհիւ Ալ Կալկա-
շանիի: Քուսան, ըստ նրա, փոքրիկ վահանի
մնացորդներն էրաժշտական գործիք էր՝ պատ-
րաստուած պղնձից: Այն սուլթանական բանակ-
ների նուագախմբերում օգտագործում էր թմբու-
կի հետ մէկտեղ: Երկու քուսա իրար խփելով՝
գրնգուն ձայն էին ստանում: Տե՛ս *al-Qalqaṣandī*,
Ṣubḥ al-a-ṣā, ց. 4, ց. 9:
40 *Al-Maqrīzī*, *al-Sulūk*, ց. 2.1, ց. 142.

41 *Al-Nuwayrī*, *Nihāya*, ց. 32, ց. 168: Ալ Բիրզալիին
եւ իբն Բասիրը Թանքիզի՝ Հալէպ հասնելու
ամսաթիւ են նշում Մուհարամի 11-ը (ապրիլի 17,
հինգշաբթի): Տե՛ս *al-Birzālī*, *al-Muqtafī*, ց. 4, ց.
177 եւ *Ibn Kaṭīr*, *al-Bidāya*, ց. 18, ց. 142:
42 Հիշրայի 715 թ. Մուհարամի 13-ն իրականում
համապատասխանում է 1315 թ. ապրիլի 19-ին,
որ շաբաթ է եղել: Ուստի սա Աբու ալ Ֆիդայի
սխալն է, եւ 13-ի փոխարէն 12 պէտք է լինի,
ինչպէս որ Ալ Նուվայրիի մօտ է:
43 *Abū al-Fidā*, *Kitāb al-Muḥtaṣar*, ց. 4, ց. 75.

կու օր եւ երկու գիշեր մնաց այնտեղ: Յե-
տոյ շարժուեցինք դէպի Զաբատրա (*Zabaṭ-
ra*)⁴⁴, որ փոքր աւերակ քաղաք է»⁴⁵: Այժմ,
ինչպէս վերեւում, լրացումներ կատարենք
Համայի տիրոջ հաղորդածին միւս պատ-
մագիրների պատումներից:

Ըստ Ալ Նուվայրիի՝ էմիր Թանքիզն
ու զօրքերը Հալէպից դուրս եկան
Մուհարամի 13-ին՝ շաբաթ օրը (ապրիլի
19), եւ երբ Այնթաբ հասան, գերագոյն
կազի Նաջմ ալ Դին իբն Սասրան այնտեղ
իջեւանեց⁴⁶: Նոյն հեղինակի հաւաստ-
մամբ՝ նախքան զօրքերի հիմնական մասի
առաջխաղացումը Մալաթիա եւ շարժուել
առաջապահ որոշ զինքեր (*al-ḡālīs*)՝ Սայֆ
ալ Դին Արաքթամուրի առաջնորդու-
թեամբ⁴⁷: Ալ Մակրիզին էլ գրում է, որ
Թանքիզը Հալէպից «էմիր Կարատային եւ
էմիր Մալիքթամուր ալ Ջամդարին ուղար-
կեց Մալաթիա: Տպաւորութիւն կար, թէ
[գօրա]շարժն ուղղուած էր Սսի դէմ»⁴⁸: Ալ
Մակրիզին այստեղ հաւանաբար չփոթում
է էմիրների անունները. դժուար է նոյնաց-
նել էմիր Կարատային, իսկ Մալիքթամուր
ալ Ջամդարը, ըստ էութեան, միւս աղբիւր-
ներից մեզ արդէն յայտնի Սայֆ ալ Դին
Արաքթամուր ալ Ջամդարն է: Շատ աւելի
կարեւոր է հաղորդման վերջին մասը:
Դժուար է ճշտել Ալ Մակրիզիի այս լրաց-
ման սկզբնաղբիւրը: Այնուամենայնիւ,
այն մեզ օգնելու է հասկանալ, թէ ինչ
կապ եւ աղբիւր ունէր արշաւանքը Մամ-
ուլեքեան սուլթանութեան եւ Կիլիկեան
Հայաստանի յարաբերութիւնների հետ:

Ալ Բիրզալիի պատումից վերոբերեա-
լին լրացնելի է այն, որ, բացի Նաջմ ալ Դի-

նից, Այնթաբում են մնացել նաեւ նօտար-
գրագիրները⁴⁹: Իբն ալ Դաւադարին նկա-
րագրում է, թէ ինչ դժուարութիւններ են
ունեցել մամուլեքեան զօրքերը Մալաթիա
հասնելու ճանապարհին. «Ինչ վերաբերում
է յաղթական զօրքերի անցած ճանապար-
հին, ապա նրանք անցան վտանգաշատ կա-
պաններով, նեղլիկ ճանապարհներով՝
դժուարամտեղի՝ իւրաքանչիւր կապանի
անցման վրայ ծախսելով 3 ժամ: Իսկ երբ
յաղթական բանակը Այնթաբից էր անց-
նում՝ [ստիպուած էին] հարթեցնել քարքա-
րոտ ճանապարհները, եւ լեռնանցքների
անցումները բարեկարգել՝ դրանց վրայ
փայտեր գցելով, յատկապէս երկու կապա-
նում, որոնցից իւրաքանչիւրի երկարութիւ-
նը մօտ երեսուն կանգուն էր, իսկ փայտեայ
կամրջակի լայնութիւնը՝ մօտ մէկ կանգուն:
[Ի վերջոյ] զօրքերի անցումը կայացաւ՝ Ալ-
լահի կամքով ողջ եւ առողջ»⁵⁰: Պատմիչի
այս հաղորդման աւելի ընդարձակ տարբե-
րակը գտնում ենք նաեւ Ալ Հասան իբն
Աբդ Աբդալլահ ալ Սաֆադի (մահ. 1317 թ.
յետոյ) անունով մամուլեք հեղինակի փոք-
րածաւալ ժամանակագրութեան մէջ: Վեր-
ջինս միւս բոլոր աղբիւրներում չհանդիպող
այնպիսի մանրամասներով է ներկայաց-
նում մամուլեքեան զօրքերի անցած ճանա-
պարհը եւ անգամ տալիս Մալաթիա քաղա-
քի նկարագրութիւնը, որ կարելի է ենթադ-
րել, թէ նա կա՛մ անձամբ մասնակցել է ար-
շաւանքին, կա՛մ էլ արշաւանքի անմիջա-
կան մասնակցի տեղեկատու է ունեցել: Իսկ
երկու բնագրերի համեմատութիւնն այն
տպաւորութիւնն է թողնում, որ Ալ Սաֆա-
դիի երկն աղբիւր է ծառայել իբն ալ Դա-
ւադարիի համար: Հաշուի առնելով Ալ Սա-
ֆադիի հաղորդման կարեւորութիւնը՝ հարկ
ենք համարում այն ներկայացնել ամբող-
ջութեամբ. «Այդ ճանապարհին 125 մեծ
կապան կայ՝ վտանգաւոր, նեղ կածաննե-

44 Բիզանդական աղբիւրների Զապետրան կամ
Սոգոպետրան է, վաղ արաբական աղբիւրների՝
Զուբատրան կամ Զիբատրան, որը քաղաք էր
Մելիտիանի հարաւարեւմտեան կողմում:
45 *Abū al-Fidā*, *Kitāb al-Muḥtaṣar*, ց. 4, ց. 75.
46 *Al-Nuwayrī*, *Nihāya*, ց. 32, ց. 168.
47 Տե՛ս նոյն տեղում:
48 *Al-Maqrīzī*, *al-Sulūk*, ց. 2.1, ց. 142.

49 *Al-Birzālī*, *al-Muqtafī*, ց. 4, ց. 177.
50 *Ibn al-Dawādārī*, *Kanz*, ց. 9, ց. 284.

րով, դժուարամատչելի, որոնցից իւրաքանչիւրի երկայնքով անցնելու համար հարկաւոր էր 3 ժամ՝ կամ [փոքր-ինչ] պակաս կամ [փոքր-ինչ] աւել: Նրանք այս ճանապարհներով անցել են, երբ Այնթաբից էին շարժուում՝ հարթեցնելով կապանները, կամըջակներ պատրաստելով, [խոր] կիրճերի վրայ փայտերով վարպետորէն լեռնային անցումներ գցելով, յատկապէս՝ երկու կապանում: Իւրաքանչիւր անցումի երկարութիւնը, որի վրայ փայտով կամուրջ էին պատրաստել, մօտ 30 կանգուն էր, իսկ փայտեայ կամըջի լայնութիւնը մէկ կանգուն էր կամ մէկ կանգունից էլ պակաս:

Իսկ կիրճերը [երեւի] ամենախոր անդունդներն էին, որտեղի եւ ինչպէս լեռների ծառերը շատ էին՝ ամբողջութեամբ ծածկուած գխտորով: Իսկ երկու կապանում էլ ձիւն կար...:

... Ինչ վերաբերում է Մալաթիայի նկարագրութեանը, ապա այն լայնարձակ քաղաք է՝ տեղակայուած ցածրավայրում, ցերեկով մէկ ժամ քայլելու երկարութեամբ, որն աւարտուում է Քարքարի եւ Քախթայի կողմերում եղած լեռներով: Հիւսիսից կրկին դրա նման մի հարթավայր է, որ ձգուում է մինչեւ Եփրատ գետը: Արեւմուտքից՝ [եւս] նոյնանման մի հարթավայր է, որ աւարտուում է հովիտներով, որում շատ գետեր եւ խոր անդունդներ կան: Այդ հարթավայրով մինչեւ այն կէս ժամուայ ճանապարհ է: Այն ձգուում է մինչեւ Զուբա Դարահ⁵¹, որը աւերակ քաղաք է: Այնտեղից ճանապարհներ են դուրս գալիս դէպի Բահասնա եւ այլուր: Արեւելքից մէկ ժամ քայլելու երկարութեամբ հարթավայր է, որն աւարտուում է բարձր եւ անյաղթահարելի լեռներով, որոնց [թւում է] վերջ չկայ:

Քաղաքում ջրանցք կայ, որ հոսում է նրա միջով եւ հարաւային կողմից անց-

51 Նկատի է առնուած Զարատրան (Զապտորա): Տե՛ս վերեւում՝ ծնթ. 44:

նում դէպի տները: Այն երկու պարիսպ ունի՝ մէկը քարէ՝ ցամաքային եւ [գետնափոր] խանդակով, երկրորդը՝ ամբարտակով՝ առանց խանդակի: Այնտեղ գեղեցիկ եւ զարդարուն տներ կան: Այն միջնաբերդ չունի, բայց այն հարաւային կողմից իր տեսքով նման է սուլթանական ապարանքի, որը միջնաբերդի է նմանուում: Քաղաքի շուրջը՝ ետեւի կողմից, շատ այգիներ կան, որտեղ բոլոր [տեսակի] մրգերից կան: Քաղաքում գետակներ են հոսում, ջրանցքներ, ցայտաղբիւրներ եւ այլն»⁵²:

Այժմ կրկին դառնանք Աբու ալ Ֆիդայի պատումին եւ տեսնենք, թէ ինչպէս զբաւուեց Մալաթիան: Համայն տէրը գրում է. «Ապա՝ վերոյիշեալ կիրակի օրուայ առաւօտեան՝ այսինքն Մուհարամ ամսի 22-ին⁵³ (1315 թ. ապրիլի 27), որ համապատասխանում է Նիսան (ապրիլ) ամսի 27-ին գրոհեցինք Մալաթիան: Զօրքերին կարգադրուեց աջ եւ ձախ թեւերի բաժանուել, եւ [այդպէս] օղակեցինք այն (իմա՝ քաղաքը): Այդժամ այնտեղից դուրս եկաւ կառավարիչը, որի անունն էր Զամալ ալ Դին ալ Նիզըր, ով սերում էր Ռումի ինչ-ինչ էմիրների ղինաստիայից: Նրա հայրն ու պապը նոյնպէս կառավարիչ էին եղել Մալաթիայում: Յիշեալ Նիզըրը յայտնի էր նաեւ Mizāmīr անունով, որի նշանակու-

52 Al-Şafadī, *Nuzhat al-mālik wa-l-mamlūk fī muḥ-taşar sīrat man waliya Mişr min al-mulūk, bi-tahqīq ‘Umar ‘Abd al-Salām Tadmūrī, al-Maṭba’a al-‘Aşriyya, Bayrūt, 2003, ք. 222-223.*

53 Աբու ալ Ֆիդայի տուած Մուհարամի 22-ը երկուշաբթի է եղել. կիրակի է եղել Մուհարամ ամսի 21-ը, որն իսկապէս համապատասխանում է 1315 թ. ապրիլի 27-ին: Սա, ըստ էութեան, հեղինակի սխալն է, որում կը համոզուեմք ստորեւ: Նաեւ ըստ Ալ Մաֆադիի եւ Իբն ալ Դասադիի՝ զօրքերը քաղաքը գրոհեցին «Մուհարամի 22-ին՝ կիրակի օրուայ կէսօրի առօրեայ յետոյ»: Տե՛ս Անյն տեղում, ք. 222: Առանձնաձևում է նաեւ Իբն Բասիթի պատումը, ըստ որի զօրքը Ռումի երկիր՝ Մալաթիա է հասել դեռ Մուհարամի 16-ին, բայց նա աւելացնում է, որ քաղաքի պաշարումը սկսուել է Մուհարամ ամսի 21-ին:

թիւնն այս երկրների քրիստոնեաների լեզուով «մեծ ամիր» էր»⁵⁴:

Ըստ Ալ Նուվայրիի՝ մուսուլմանական զօրքերը քաղաքի վրայ են շարժուել Մուհարամ ամսի 21-ին: Խօսքն այստեղ, ըստ էութեան, վերաբերում է ոչ թէ բանակի հիմնական մասին, այլ Սայֆ ալ Դին Արաքթամուրի գլխաւորած առաջապահ զնդերին, որոնք, ինչպէս վերեւում ենք նշել, աւելի վաղ էին շարժուել Հալէպից: Սայֆ ալ Դինը, Մալաթիա հասնելով, տեսնում է, որ քաղաքն ամրացուել է, եւ ստիպուած է լինում երեք օր շարունակ ճնշել, մինչեւ որ կը ժամանէր էմիր Թանքիզը՝ մնացեալ զօրքերի հետ⁵⁵: Ալ Բիրզալին հաստատում է սա: «Մուհարամի 28-ին՝ կիրակի օրը առաւօտեան,- գրում է նա,- լուրեր հասան [Դամասկոս], որ մուսուլմանների առաջապահ զօրքերը Մալաթիայի մօտ ջարդել են թաթարների հետախուզական զնդերին, ապա շրջափակել քաղաքը: Ապա նոյն օրուայ վերջում Դամասկոս եկան մեծ էմիր Սայֆ ալ Դին Կաջիսը եւ Նասիր ալ Դին Դաւադարը՝ Դամասկոսի փոխարքան, ու յայտնեցին, որ [զօրքերը] Մալաթիա են հասել Մուհարամի 21-ին՝ կիրակի օրը առաւօտեան, եւ տեսել, որ քաղաքն ամրացուել է, իսկ բնակիչները ոտքի են ելել՝ իրենց հետ մղելու»⁵⁶:

Այսպիսով, համադրելով արաբալեզու աղբիւրների տուած ամսաթուերը, կարելի է եզրակացնել, որ զօրքի հիմնական մասն էմիր Թանքիզի գլխաւորութեամբ Մալաթիա է հասել ապրիլի 28-ին եւ 29-ին: Տեսնելով քաղաքն օղակած մամլուքեան զօր-

54 Abū al-Fidā’, *Kitāb al-Muḥtaşar*, ք. 4, ք. 75.
 55 Al-Nuwayrī, *Nihāya*, ք. 32, ք. 168.
 56 Al-Birzālī, *al-Muqtafi*, ք. 4, ք. 178: Այն, որ քաղաքը պատրաստուել էր պաշտպանութեան, հաստատու է նաեւ Իբն Բասիթը: Տե՛ս Ibn Kaḫḫir, *al-Bidāya*, ք. 18, ք. 142: Այս ամսաթիւերում կարծես թէ սխալուել է Ալ Մալիքիզի, ըստ որի զօրքը Մալաթիա է հասել Մուհարամի 23-ին եւ երեք օր պաշարել: Տե՛ս al-Maqrīzī, *al-Sulūk*, ք. 2.1, ք. 143:

քի բազմամարդութիւնը, Մալաթիայի մեծամեծները վճուել են amān (ապահովութեան երաշխիք) խնդրել: Քաղաքի հարաւային դարպասը բացուել է, եւ էմիր Թանքիզի հետ բանակցելու են դուրս եկել Մալաթիայի կառավարիչ Զամալ ալ Դին Նիզըր ալ Միզամիւրը եւ քաղաքի կադէին՝ իրենց ենթակաների հետ⁵⁷: Առանձին մէկնութեան է արժանի քաղաքի կառավարչի անունը՝ Միզամիւր, որի նշանակութիւնը, ինչպէս Համայն տէրն է բացատրում, «տեղի քրիստոնեաների լեզուով մեծ ամիր էր»: Յատկանշական է, որ Մալաթիայի քրիստոնեայ բնակչութեան եւ առհասարակ բնակչութեան մեծամասնութիւնը կազմում էին հայերը, ուստի, մեր կարծիքով, կռահելի է, որ կառավարչին տրուած Mizāmīr մականունը հայկական ծագում ունի եւ իրականում հայերէն «մեծ ամիր» կապակցութեան արաբերէն տառադարձումն է: Քաղաքի մուսուլման կառավարչի՝ հայկական մականունով յայտնի լինելն արդէն իսկ այստեղ հայ բնակչութեան ունեցած դերի ու դիրքի խօսուել վկայութիւնն է: Հայերէնը, փաստորէն, միջնադարի հայորդակցութեան լեզուի (lingua franca) կարգավիճակ ունէր⁵⁸: Հետաքրքիր է պատմիչի միւս վկայութիւնը, թէ քաղաքի կառավարչի պաշտօնն են զբաղեցրել նաեւ Զամալ ալ Դինի հայրն ու պապը: Վերջիններիս անունները նա, ցաւօք, չի նշում:

Մամլուքեան հեղինակներից առանձնանում են Ալ Նուվայրին եւ Ալ Մակրիզին, ովքեր Մալաթիայի կառավարչին այլ կերպ են կոչում՝ նշելով նաեւ նրա հօր անունը՝ Բադր ալ Դին Միզամիւր իբն Նուր ալ Դին (Նուր ալ Դինի որդի Բադր ալ Դին Միզամիւր. ընդգծումը մերն է - Գ. Դ.)⁵⁹:

57 Abū al-Fidā’, *Kitāb al-Muḥtaşar*, ք. 4, ք. 75.
 58 Հմմտ. S. La Porta, *The Armenian Episcopacy*, pp. 10 եւ D. Korobeinikov, *A Greek Orthodox Armenian*, pp. 720-721:
 59 Al-Maqrīzī, *al-Sulūk*, ք. 2.1, ք. 143.

Այսպիսով, քաղաքի տէրերն ու բնակչու- թիւնն *amān* են ստացել: Այլ Մակրիզին մէկն է արաբագիր այն հեղինակներից, ովքեր ներկայացնում են քաղաքի յանձն- ման նախապատմութիւնը: Ըստ նրա՝ մամ- լուքեան սուլթան Ալ Նասիրը, իմանալով քուրդ Մանդուհի եւ Միզամիրի լարուած յարաբերութիւնների մասին, վճռել է օգ- տագործել այդ հանգամանքը եւ տիրանալ Մալաթիային: Սուլթանը զանազան հնարքներ է բանեցրել Միզամիրի նկատ- մամբ, մինչեւ որ շահել է վերջինիս վստա- հութիւնը: Միզամիրը, ով կարծում էր, թէ Մանդուհը պատրաստուած է իրենից խլել քաղաքի կառավարչութիւնը, գաղտնի նա- մակազրուցիւն է սկսել Եգիպտոսի սուլ- թանի հետ՝ գերադասելի համարելով քա- ղաքը յանձնել մամլուքներին, քան թէ զի- ջել այն Մանդուհին: Երբ Մանդուհը յայտնուել է Մալաթիայում խարաջ հաւա- քելու նպատակով, Միզամիրը վճռել է վերջապէս կենսագործել Ալ Նասիրի հետ ձեռք բերած պայմանաւորուածութիւնը եւ դրա հետ մէկտեղ Մանդուհին մատնել մամլուք սուլթանի ձեռքը: Ըստ պատմիչի՝ ապահովութեան երաշխիք ստանալուց յե- տոյ Միզամիրին եւ նրա ենթականերին սուլթանական պատուոյ հազուստ են հազցրել, որ նրանց համար պատրաստուել էր Կահիրէում, եւ անգամ սուլթանական դրօշ տուել⁶⁰: Այլ Մակրիզիի այս պատմու- թիւնը քիչ թէ շատ աղբրուում է Ալ Բիր- զալիի պատմիչի հետ: Վերջինս գրում է. «[Բանն այն է, որ] Մալաթիան որպէս *iqfā'* (ուզմաւատ) նրան էր պատկանում, որ Խարբանդան նրան էր տուել [հիջրայի 7]14 թուականին եւ իր կողմից այնտեղ կառավարիչ նշանակել քուրդագզի մէկին (նկատի է առնուած Մանդուհը - Գ. Դ.): Նա վատ էր վերաբերուել [քաղաքի] բնակչութեան հետ: Սա նրանց դրդել էր նամակազրուցիւն հաստատել սուլթանի

հետ՝ ցանկութիւն յայտնելով լինել նրա ենթակայութեան տակ»⁶¹: Այս խճճուած ի- րադարձութիւնների մի պատուած էլ պահ- պանել է զպտի Մուֆադալ իրն Աբի ալ Յադաիլը. «Յաղթական զօրքի՝ Մալաթիա արշաւելուց առաջ Խարբանդա արքան այն Չոբանին էր շնորհել, երբ Ռոււմ էր ուղար- կել: Չոբանն այնտեղ իր կողմից մի քուրդ կառավարիչ էր նշանակել: [Սակայն] յի- շեալ կառավարիչը սկսել էր անցնել իր [իրազօրութիւնների] սահմանները Մալա- թիայի տէրերի հետ յարաբերութիւններում եւ նեղել նրանց: Նրանք էջին դիմացել դրան եւ իրենց ձեռքով [իրք] 175 տա- րուայ վաղեմութեան «նշանակման կար- գադրութիւններ» (*tawāqī'*) պատրաստել էին «սելջուկի զարմի» (բնագրում՝ *banī Salğūq*) արքաների անուկից, որ նրա տէ- րերն էին՝ հօրից որդուն (բնագրում՝ *ab 'an ḡadd*, այն է՝ «պապից որդուն») փոխանցե- լով: Միայն թէ պարտաւորութիւն ունէին ամէն տարի հարկ ուղարկել թաթարներին, ինչպէս որ մնացեալ կառավարիչներն ու արքաները, զորօրինակ Մարդինի եւ Շի- րագի տէրերը»⁶²:

Նախքան *Kitāb al-Muḥtaṣar*-ի յետա- գայ շարադրանքին անցնելը անդրադառ- նանք նաեւ դէպքի մասին պատմող միակ պարսկագիր հեղինակի՝ Քաշանիի (կամ Ալ Ղաշանի, մահ. 1324 թ. յետոյ) գրածին, ո- րն էականօրէն տարբերում է մամլուք պատմագիրների վկայածից: Նա իր *Tārīḥ-i 'Ulğāyīn* («Օլջայթուի պատմութիւնը») եր- կում գրում է, որ հիջրայի [71]4 թ. Սաֆար ամսին (1314 թ. մայիս/յունիս) Մալաթիա քաղաքից Աբու Բաքր մականուամբ մի

61 Al-Birzālī, *al-Muqtafi*, ց. 4, ք. 189: Հմմտ. Ibn Kaṯīr, *al-Bidāya*, ց. 18, ք. 143 եւ R. Amitai, *Turko-Mongolian Nomads and the Iqfā' System in the Islamic Middle East (CA. 1000-1400)* // *Nomads in the Sedentary World*, ed. by Khazanov A. M. and Wink A., Curzon Press, 2001, p. 164:
62 Mufaḡḡal, *al-Nahğ al-sadiḡ*, ք. 751 [245]: Հմմտ. Միզամիրի՝ պապից թոռ քաղաքի տէրը եղած լինելու Աբու ալ Ֆիդայի հաղորդման հետ:

60 Տե՛ս նոյն տեղում:

դերուիչ հաջջ կատարելու նպատակով Ա- սորիքի կողմերն էր գնացել: Նրան այն- տեղ բռնել եւ տարել էին Հալէպի էմիր Ուլքաշիի մօտ: Աբու Բաքրը Ուլքաշիից ազատուելու համար դրամական փոխհա- տուցում էր առաջարկել. «Քեզ վստահելի մէկին ինձ հետ ուղարկի՛ր, որպէսզի նրա հետ Մալաթիա քաղաքից հարիւր հազար դինար ի նշան հնազանդութեան ձեռ գան- ձարանին ուղարկենք»: Ուլքաշին Աբու Բաքրին ուղեկից էր նշանակել իրեն վստահելի մի դեսպանի եւ ուղարկել Մա- լաթիա: Հայրենի քաղաք հասնելուն պէս շէյխը խորհրդակցել էր էմիր Շիհաբ ալ Դին Միզամիրիի հետ: Վերջինս հրաժար- ուել էր վճարել պայմանաւորուած գումար- քը՝ Հալէպի էմիրի դեսպանին ուղարկելով էմիր Չոբանի մօտ: Սա, լսելով դեսպանի առաքելութեան նպատակը, ծեծել էր նրան եւ ուղարկել սուլթան Ալ Նասիրի մօտ: Երբ դեսպանը Կահիրէ էր հասել եւ պատ- մել իր հետ պատահածի մասին, սուլթանը վճռել էր արշաւել Մալաթիա⁶³: Ահա այս- պիսի դրդապատճառ է դնում Քաշանին Մալաթիա արշաւելու սուլթանի որոշման հիմքում⁶⁴: Պարսիկ հեղինակի պատումը,

սակայն, որոշ խնդիրներ է յարուցում: Ոչ միայն ակնյայտօրէն տարբերում է դէպ- քերի զարգացման ընթացքը, այլեւ պատ- մութեան ոչ բոլոր գործող անձերն են նոյ- նանում եւ հաւաստում մամլուքեան աղ- բիւրներով, ինչպէս օրինակ՝ շէյխ Աբու Բաքրը, Հալէպի էմիր Ուլքաշին: Մամլու- քեան աղբիւրներից յայտնի է, որ մինչեւ 1314 թ. օգոստոսը Հալէպի էմիրն է եղել Սայֆ ալ Դին Սուդի ալ Ջամդարը, իսկ վերջինիս մահից յետոյ այդ պաշտօնում նշանակուել է Ալա ալ Դին Ալ Տուհբու- ղան: Համընկնում է Մալաթիայի էմիրի հայկական ծագում ունեցող մականունը՝ Միզամիրի, թէեւ, ինչպէս տեսանք, նա ա- նուանուած է Շիհաբ ալ Դին, ոչ թէ՛ Ջա- մալ ալ Դին Խիզը, ինչպէս Աբու ալ Ֆի- դայի կամ Բադր ալ Դին Միզամիր իրն Նուր ալ Դին Ալ Նուվայրիի եւ Ալ Մակ- րիզիի մօտ⁶⁵:

Ինչեւէ, Քաշանին գրում է, որ Ալ Նա- սիրն ի վերջոյ իր վեց էմիրներին՝ Սանջար Համամդարին, Կուլիին, Կայդարին, Բու- բաքրիին (այսպէս է բնագրում. ակնյայտ է, որ խօսքը [Սայֆ ալ Դին Բեքթեմուր] Աբու Բաքրիի մասին է), Խաշիզին եւ Սալարի որդի Մուզաֆֆարին հրամայում է 6 հա- զար հեծեալով արշաւել Մալաթիայի դէմ: Ըստ հեղինակի՝ էմիրները 715 թուականի Չու ալ Հիջլա ամսին հասնում են Ղազա, որտեղ նրանց է միանում Ղազայի էմիր Կուլդուրին՝ հազար հեծեալով: Երբ Դա- մասկոս են հասնում, Դամասկոսի ամիրա- յապետ (բնագրում՝ *malik al-umarā'*) Թին- քիզը (*Tinkiz*, նկատի ունի Ասորիքի փոխ- արքայ Թանքիզին) նրանց է միանում իր

իքնութիւնը, իսկ Խաշիզն ու Դամաթարը մեզ Ալ Բիրզալիի պատումից յայտնի Սայֆ ալ Դին Կաշիս ալ Սիլաֆարն ու Նասիր ալ Դին Դա- ւադարն են: Արդումը Եգիպտոսի փոխարքայ (nā'ib al-saltana) Սայֆ ալ Դին Արդում ալ Նասի- րին էր, ով այդ պաշտօնը զբաղեցնում էր 1312 թ.: Բայքարս ալ Մամուրիի ձեռքակալութիւնից յետոյ (տե՛ս al-Safadi, *al-Wāfi*, ց. 8, ք. 232):
65 Ibn al-Dawādārī, *Kanz*, ց. 9, ք. 283.

10-հազարանոց զորքով: Հալէպում զօրքը համալրւում է եւս 10 հազար զինուորով, «բոլորն անցնում են գետը եւ Ռումի սահմաններին հասնում»⁶⁶: Քաշանիի նշած թուերը գումարելով եգիպտական եւ ասորիքեան միացեալ բանակի թիւն ենք ստանում՝ 27 հազար, ինչն ակնյայտ չափազանցութիւն է: Թշնամական նման ահռելի բանակ ներկայացնելով՝ Քաշանին հաւանաբար փորձել է ինչ-որ կերպ արդարացնել մամլուքների կողմից Մալաթիայի գրաւման փաստը: Այնուհետեւ Քաշանին տալիս է մամլուքեան բանակի անցած յետագայ երթուղին՝ Հոռոմկլա - Քախթա - Քարքար - Խաս (, մեզ անյայտ) - Սամսուր (, մեզ անյայտ) - Մարիսիջ (Marhiǰ) լեռ, որը յայտնի էր *Āqhe-īdāq* անունով: Ըստ նրա՝ այնտեղից Համայի էմիրը երեք հազար հեծեալով շարժւում է Մալաթիայի դէմ, բայց Սաֆար ամսի 10-ին (1315 թ. մայիսի 16)՝ ուրբաթ օրը (*rūz-e ādāne*), պարտութիւն է կրում քաղաքի պաշտպաններից: Շաբաթ օրը քաղաք են հասնում եւս վեց հազար զինուորներ եւ քաղաքի մուսուլմաններին լուր ուղարկում, որ իրենց նպատակը պատերազմելը չէ, այլ սուլթանի ֆիրմանը (*fermān*) փոխանցելը, որով իբր մուսուլմաններից պահանջւում էր թողնել Մալաթիան եւ տեղափոխուել Ասորիքի բնակավայրեր: Սակայն, «երբ Թանքիզը հասաւ Մալաթիա, այս խորհրդից դժգոհ մնաց» (*bedān maṣlahat rādī wa-haṣnūd naṣod*)⁶⁷: Ինչպէս տեսնում ենք, Քաշանիի պատումի այս հատուածը միայն ընդհանուր գծերով է աղերսւում մամլուք հեղինակների պատմածին, աւելին ակնյայտ սխալներ է պարունակում: Օրինակ, նա գրում է, թէ Համայի տէրը, որ մեզ քաջ յայտնի Աբու ալ Ֆիդան է, առաջինն է հասել Մալաթիա եւ փորձել գրաւել այն, ընդ որում՝ ոչ թէ Մուհարամ ամսին, այլ՝ Սաֆար: Այնուա-

մենայնիւ, խօսքն այստեղ գուցէ ոչ թէ Աբու ալ Ֆիդայի, այլ Սայֆ ալ Դին Արաք-թամուրի առաջապահ զնդերի մասին է, որոնք, ինչպէս Ալ Նուվայրիի եւ Ալ Մակրիզիի վերը բերուած հաղորդումներից գիտենք, առաջինն էին հասել Մալաթիա եւ քաղաքը պաշարման մէջ առել: Խօսք չկայ նաեւ ապահովութեան երաշխիք ստանալու շուրջ քաղաքի մեծամեծների վարած բանակցութիւնների մասին:

Արաբագիր հեղինակների վերեւում յիշուած պատումներից տարբերում է դէպքերի ժամանակակից մամլուքեան մէկ այլ պատմիչի՝ Ալ Եուսուֆիի (մահ. 1358 թ.) վկայութիւնը: Վերջինիս հաղորդումը, սակայն, մեզ միջնորդաւորուած է հասել, քանզի նրա երկը՝ *Nuzhat al-nāzir fī sirat al-Malik al-Nāṣir* («Ականատեսի զբօսանքը Ալ Մալիք ալ Նասիրի կեանքի ընթացքով»), որը, ինչպէս վերնագրից է երեւում, Ալ Մալիք ալ Նասիրի կենսագրութիւնն է, մեզ մասամբ է հասել: Երկից պահպանուել է 1332-1338 թթ. ընդգրկող մի հատուած միայն⁶⁸: Ալ Եուսուֆիի պատմութիւնը լայնօրէն օգտագործուել է յաջորդ սերնդի պատմիչների, մասնաւորապէս Ալ Այնիի կողմից, ով բազմաթիւ մէջբերումներ է կատարել նրանից: Մալաթիայի գրաւման մասին նրա (սովորաբար անուանում է *ṣāḥīb sirat al-Nāṣir*) Ալ Նասիրի վարքագրութեան հեղինակ) պատմութիւնը (դրուած Հիջրայի 714 թ. տակ) եւս մեզ հասել է Ալ Այնիի շնորհիւ⁶⁹: Ալ Եուսուֆիի տարբերակն ինչ-

68 Al-Yūsufī, *Nuzhat al-nāzir fī sirat al-Malik al-Nāṣir*, bi-tahqīq Aḥmad Ḥuṭayt, 'Ālam al-Kutub, Bayrūt, 1986.

69 Յատկանշական է, որ վերջինիս երկի՝ 'Iqd al-ḡumān-ի ոչ բոլոր մասերն են ցայսօր խմբագրուած եւ հրատարակուած: Ծարուակում է անտիպ մնալ 616-ի հիջրայի 714 թ. ընդգրկող հատորը: Բարեբախտաբար, Ալ Այնիի պատմագրական ժառանգութեան ուսումնասիրող ճապոնացի հետազոտող Նորուտակա Նակամաչիի օգնութեամբ մեզ հասու են դարձել Ստամբուլի Բէյազիդի գրադարանի MS Veliyuddin 2394 ձեռագրի համապատասխան էջերի լուսապատ-

66 Kašānī, *Tārīḥ Ulǰaytu*, §. 171-172.
67 Տե՛ս նոյն տեղում:

որ չափով պարզ գրոյցի տպաւորութիւն է թողնում. «Օրերից մի օր Ալ Մալիք ալ Նասիրը զնդակ էր խաղում (*kāna fī ba'd al-ayyām la'iba al-ukara*) եւ երբ վերջացրեց, դուրս եկաւ հրապարակից՝ աջից եւ ձախից զօրքերով շրջապատուած: Նա լսեց, որ ինչ-որ մէկն օգնութեան է կանչում ասելով խորհուրդ [ուհեմ], խորհուրդ [ուհեմ] մեր տէր սուլթանի համար: Սուլթանն ասաց՝ բերէ՛ք նրան, եւ թիկնազօրայինները (բնագրում՝ *al-nuqabā'*) բռնեցին նրան ու մօտեցրին սուլթանին: Նրա լեզուն ազատ արձակեցին եւ խօսեց»: Ալ Եուսուֆին գրում է, որ սուլթանին ներկայացածը Աբդ ալ Ռահման անունով վաճառական էր՝ Շամի երկրից, ով ճամփորդել էր Պարսկաստանում, Ռումի երկրում եւ Ալ Դայլամում⁷⁰ ու հասել էր Մալաթիա քաղաք: Մալաթիայում եղած ժամանակ նա դուրս էր եկել շրջելու քաղաքի արուարձանում եւ ապանատես էր եղել բազմամարդ քաղաքային զուարճութիւնների: Ամբոխի մէջ մի հայ էր տեսել, որի շուրջ մարդիկ էին խոսուել եւ ծիծաղում էին: Կանգ էր առել՝ դիտելու, թէ այդ ինչ է անում: Պարզուել էր՝ նմանակում է սուլթան Ալ Նասիրին եւ ծաղրում նրան: Վաճառականն իբր երդուել էր, որ իր տեսածի մասին պէտք է անպայման յայտնի սուլթանին: Ալ Եուսուֆին շարունակելով գրում է, որ երբ սուլթանը լսում է վաճառականին, զայրոյթից վեր է ցատկում տեղից եւ խոստանում աւերել Մալաթիան, իսկ բնակչութեանը գերութեան քշել: Վաճառականին էլ պատուի է արժանացնում եւ առաջարկում առաջադրանք կատարել, որի դիմաց 100 դինար եւ կամեցածը խնդրելու հնարաւորութիւն կը ստանար: Վաճառականը համաձայնում է:

Նա պէտք է վերադառնար Մալաթիա՝ այն նոյն թաղամասը, գտնէր հային եւ ներկայացման ժամանակ մէկ դինար նետէր նրա ուղղութեամբ: Երբ վերջինս վերցնէր դինարը եւ բերանում պահէր, այդ օրը տունն չէր հասնելու, քանզի ճանապարհին մահանալու էր (դինարն, ըստ հուլիանի, թուրքաւորուած էր - Գ. Դ.): Վաճառականն անում է ճիշտ այնպէս, ինչպէս սուլթանն էր պահանջել եւ կրկին վերադառնում է Կահիրէ: Ալ Մալիք ալ Նասիրը պայմանաւորուածութեան համաձայն Աբդ ալ Ռահմանին սուլթանութեան ամբողջ տարածքում ազատում է մաքսերից եւ շնորհում խոստացած 100 դինարն-ն՝ այլ ընծաներ: Ապա նամակ է յղում Դամասկոսի փոխարքայ Սայֆ ալ Դին Թանքիզին (բնագրում՝ *Dankiz* - Գ. Դ.) եւ հրահանգում հաւաքել Դամասկոսի, Հոմսի, Համայի եւ Հալէպի զօրքերն ու շարժուել դէպի մի վայր, որը գտնւում էր «Ռում եւ Արեւելք տանող ճանապարհների խաչմերուկում»: Երբ մամլուք փոխարքաներն ու էմիրները սուլթանի պահանջած վայրն են հասնում, իմանում են, որ իրենք իրականում ուղարկուած են Մալաթիան գրաւելու համար: Քաղաքի բնակչութեան ընդդիմանալու եւ դիմադրութիւն ցոյց տալու դէպքում նրանց պատուիրուած էր սպանել, գերեզմանել եւ աւարառել: Մալաթիա հասնելով տեսնում են, որ բարիքներով ու քաղցրահամ ջրերով, այգեստաններով հարուստ քաղաք է՝ պաշտպանուած ամրակուռ եւ անառիկ պարիսպներով: Զօրքի բազմութիւնը տեսնելով՝ քաղաքի բնակիչներն իբր զարմանում են եւ կարծում, թէ արքայ Խարբանդան կամ նրա որդի Աբու Սաիդն է եկել Ռումի երկրում որսի կամ շրջելու: Քաղաքից մի խումբ բնակիչներ են դուրս գալիս եւ տեսնում, որ իրականում մամլուքեան զօրքն է՝ Սայֆ ալ Դին Դանքիզի գլխաւորութեամբ: Վերադառնում են ու այդ մասին յայտնում քաղաքի կառավարիչ Միզամիրային (այսպէս է բնագրում *Mizāmīrā* - Գ. Դ.), ով զօրք է

69 Նկատի է առնուած Իրանի՝ Կասպից ծովի հարաւային անախմախ տարածաշրջանը, որ ձգուած է Էլբուրսի լեռնաշղթայի երկայնքով: Տե՛ս V. Minorski, *Daylam* // EI2, vol. 2, pp. 189-194:

հաւաքում քաղաքի դարպասների մօտ⁷¹: Այլ Այնին այստեղ դադարեցնում է Այ Եուսուֆիի պատմածը եւ դէպքերի յետագայ ընթացքը շարունակում է ներկայացնել այլ պատմիչների, մասնաւորապէս՝ Իբն Քասիրի եւ Այ Նուվայրիի երկերից մէջբերումներ կատարելով⁷²: Այսպիսով, Այ Եուսուֆին

71 Al-'Aynī, 'Iqd al-ğumān fī tāriḥ ahl al-zamān, ǧ. 16 // Veliyuddin 2394, Bayazit devlet kütüphanesi, էջ 29-33:

72 Յատկանշական է, որ Այ Այնիի 'Iqd al-ğumān երկում Իբն Քասիր յորջորջում ֆեղիմակից արուած մէջբերումները երբեմն զգալիորէն տարբերում են, իսկ որոշ դէպքերում էլ նկատելիորէն շեղում այդ երկի՝ մեզ հասած տարբերակից, որը նաեւ մեզք ենք օգտագործել վերեւում: Գուցէ Այ Այնին ձեռքի տակ ունեցել է Իբն Քասիրի երկի մէկ այլ տարբերակ, որն այժմ կորած է եւ անյայտ գիտութեանը: Ինչպէս, այդ նոյն հանգամանքը Նորուտակա Նակամաչիին թոյլ է տուել ենթադրել, որ Այ Այնիի երկում սխալմամբ Իբն Քասիր անուանումս իրականում Այ Նուվայրին է: Տե՛ս N. Nakamachi, Al-'Aynī's Chronicles as a Source for the Bahrī Mamlūk Period // Orient (The Society for Near Eastern Studies in Japan), vol. XL, 2005, pp. 153-157: Այս ենթադրութիւնը, սակայն, մեզ այնքան էլ համոզիչ չի թուում, քանի որ թէկուզ այս յօդուածի քննութեան առարկայ հիշրայի 714 թ. դէպքում Այ Այնին, այսպէս կոչուած, Իբն Քասիրից կատարած մէջբերումից անմիջապէս յետոյ տալիս է նաեւ հէնց Այ Նուվայրիի պատմի համառօտագրութիւնը: Նշանակում է՝ աւելի խոր բնագրային-աղբիւրագիտական ուսումնասիրութիւն է անհրաժեշտ Այ Այնիի երկի սկզբնաղբիւրների հետ կապուած այս առեղծուածը լուծելու համար: Ըստ Այ Այնիի, այսպէս կոչուած, Իբն Քասիրից կատարած մէջբերման՝ զօրքը Մալաթիայի վրայ գրոհել է 715 թ. Մուհարամ ամսի 22-ին՝ երկուշաբթի օրը (1315 թ. ապրիլի 28), եւ երբ Մալաթիայի բնակչութիւնը տեսել է մամլուքեան զօրքի բազմաքանակութիւնը, ապահովութեան երաշխիք է խնդրել: Քաղաքի դարպասները բացուել են, եւ զօրքը, ներս խուժելով, թալանի է անցել՝ «վերցնելով շատ հայերի, ասորիների եւ [այլ] քրիստոնեաների: Իսկ մուսուլմաններից տեղահանել են Հայէպ»: Բանակները քաղաքը թողել են Սաֆադ ամսի 10-ին՝ երեքշաբթի օրը՝ կրակի տալով քաղաքը եւ քանդելով աշտարակները: Երբ զօրքն անցել է Darbandāt-ը (իմա՝ կապանները - Գ. Դ.), Սայֆ ալ Դին Կաշիխը գերիների, ինչպէս նաեւ Միզամիի (բնագրում կրկին Mīzāmīrā է) եւ

սուլթան Այ Նասիրի՝ Մալաթիայի վրայ արշաւելու որոշման հիմքում այլ դրդապատճառ է դնում, այն է՝ սուլթանին Մալաթիայի բնակիչների հասցրած անձնական վիրաւորանքը, ինչն իրականում հազիւ թէ նման խոշոր ռազմական ձեռնարկման պատճառ լինէր:

Առաջ անցնելով եւ կրկին դառնալով վերը քննարկուած միւս մամլուքեան պատմական երկերին՝ նշենք, որ էմիր Թանքիզից ստացած amān-ը, որ պիտի ապահովէր քաղաքի բնակչութեան անվտանգութիւնը, չի արդարացնում իրեն, եւ յետագայ դէպքերն անկանխատեսելի ընթացք են ունենում: Քաղաքի պարիսպների տակ խոռոչուած մուսուլմանական զօրքի մէջ տարածայնութիւններ են սկսուում: Զօրքի մի մասը՝ յանձին վերոյիշեալ էմիր Սայֆ ալ Դին Արաքթամուրի, իր ենթակաների հետ որոշում է քաղաքի բացուած դարպասից ներս մտնել եւ աւարառութեան ենթարկել բնակչութեանը: Այ Նուվայրին այս առիթով գրում է. «Այդ ընթացքում էմիր Սայֆ ալ Դին Արաքթամուրը բռնի ուժով գրաւեց քաղաքն ու նրա շրջակայքը: Ուստի էմիր Սայֆ ալ Դին Թանքիզը մարդ ռազարկեց նրա մօտ՝ հրամայելով իր զինակիցներին աւարառութիւն թող չտալ՝ ասելով, որ քաղաքը գրաւուել է ապահովութեան երաշխիքով: Նա էլ պատասխանեց, թէ ինքն այն գրաւել է սրով ու պաշարման մէջ է պահել երեք օր, եւ նրա բնակչութիւնն [այդ ընթացքում] կռուել է իր դէմ նախքան զօրքի ժամանելը: [Այդպէս] թողատրեց իր հետ եղածներին մտնել եւ կողոպտել: Նա նրանց արգելեց կուտակում ստեղծել դարպասի մօտ, այլ մէկը միւսի յետեւից [հանգիստ] մուտք

Մալաթիայի միւս մեծամեծերի հետ ուղեւորուել է Կահիրէ: Միզամիի սուլթանից տասը ներքինի է ստացել ի ծառայութիւն: Տե՛ս al-'Aynī, 'Iqd (Veliyuddin 2394), էջ 34: Ինչպէս տեսնում ենք, Իբն Քասիր պատմիչի երկի այժմ յայտնի բնագրի հետ այս պատումը ընդգծուած տարբերութիւններ ունի: Հմմտ. վերեւում եւ յետագայ շարադրանքում Իբն Քասիրի երկի լղումների հետ:

գործել, մինչեւ որ [բոլորը] մտան քաղաք»⁷³: Դէպքերի ակնատես եւ մասնակից Աբու ալ Ֆիդան վկայում է, որ հարաւային դարպասը հէնց Համայի զօրքի դիրքերի դէմ յանդիման էր. «Այնպէս պատահեց, պատմում է նա, որ բացուած հարաւային դարպասը հէնց իմ դիրքի՝ Համայի զօրքի առջեւում էր: Ուստի ես համացի էմիր Սարիմ ալ Դին Ուզբեկի եւ մի խումբ այլ էմիրների մօտ մարդ ռազարկեցի ու հրամայեցի հսկել դարպասը, քանզի վախեցայ, որ զօրքը կարող է բուռն ցանկութիւն ունենալ աւարառութեան ենթարկելու Մալաթիան: Մենք այդ գործով էինք զբաղուած եւ դարպասը հսկելով, մինչեւ որ եկաւ Սայֆ ալ Դին Թանքիզը, ում դիրքը [ռազմաճակատի] միւս կողմում էր: Երբ եկաւ, մի խումբ էմիրների նշանակեց՝ քաղաքի դարպասը հսկելու համար: Սակայն յետոյ զօրքի ցանկութեան դէմն առնել չյաջողուեց, որ քաղաքը գրոհեցին յիշեալ դարպասից: Մի զօրախումբ էլ գրոհեց միւս կողմից: Սայֆ ալ Դին Թանքիզը ցանկացաւ արգելել նրանց այդ անել, բայց զօրքի բուռն ցանկութեան պատճառով իրավիճակը դուրս եկաւ վերահսկողութիւնից»⁷⁴:

Այսպէս մուսուլմանական բանակները խուժում են քաղաք: Նախ տեսնենք, թէ քաղաքում նրանց գործածի մասին ինչ է ասում Աբու ալ Ֆիդան. «Թալանեցին մուսուլմանների եւ քրիստոնեաների բոլոր հարստութիւնները, չթողեցին անգամ [գետնի տակ] թաղուած որեւէ բան, որոնց տեղը չէին ասում: Այդպէս կողոպտեցին նրա մուսուլման եւ քրիստոնեայ ողջ բնակչութեանը: Բայց յետոյ հրամայուեց բացարձակապէս ձեռնպահ մնալ մուսուլման կանանց եւ տղամարդկանց կողոպտելուց: Ուստի խիստ նախատեցին բոլոր մուսուլման տղամարդկանց եւ կանանց ու ազատ արձակեցին, բայց նրանց փողերը կո-

73 Al-Nuwayrī, Nihāya, ǧ. 32, ǧ. 168.
74 Abū al-Fidā', Kitāb al-Muḥtaṣar, ǧ. 4, ǧ. 75.

րան: Իսկ քրիստոնեաներին շարունակեցին գերել մինչեւ վերջին մարդը: Նրանցից գերի ընկաւ Ibn Karbugā (Իբն Քարբուդա) անունով մէկը, ով թաթարների [նշանակած] վերատեսուչն էր (բնագրում՝ šihnat al-tatar bi-tilka al-bilād) այդ կողմերում: Նրանցից գերեվարուեց նաեւ շէյխ Մանդուն (բնագրում՝ Mandū), ով Արաքնի (Araknī) բերդի տէրն էր: Իսկ յիշեալ Մանդուն, թաթարների բանագնացների պահապանն էր: Նա հետեւում էր մուսուլման բանագնացներին եւ բռնում⁷⁵: Նա մուսուլմանների համար ամենավնասակար մարդկանցից էր»⁷⁶: Շէյխ Մանդուն մեզ արդէն ծանօթ Մանդունն է, իսկ նրա հետ գերեվարուած մոնղոլ պաշտօնեան ժամանակի միւս աղբիւրներից յայտնի չէ: Ըստ Այ Մակրիզիի՝ Միզամիրն անձամբ Բայբարս ալ Հաջիբ եւ Արաքթամուր էմիրներին առաջնորդել է իր տուն, որտեղ բռնել են բուրդ Մանդունին եւ յանձնել էմիր Սայֆ ալ Դին Կուլլիի հսկողութեանը⁷⁷: Աբու ալ Ֆիդայի արձանագրած Արաքնի տեղանուանն անդրադառնալու առիթ ներքեւում դեռ կ'ունենանք՝ փորձելով պարզել, թէ որ բերդի մասին է խօսքը:

Այ Նուվայրին գրում է, որ քաղաքն ամբողջովին թալանուում է, սպանում են մեծ թուով հայեր ու այլ քրիստոնեաներ, մի մեծ խումբ էլ գերեվարում է: Նոյն բախտին են արժանանում նաեւ մի խումբ մուսուլմաններ: Սպանդից խուսափելու նպատակով շատ հայեր թաքնուում են քաղաքի գերեզմանոցներում: Քաղաքի մի մասը աւերածութեան է ենթարկուում եւ կրակի տրուում⁷⁸, քանդուում են պարիսպները: Մալաթիայի աւարառութեան, համատարած թալանի եւ հայերի ու այլ քրիստո-

75 Հմմտ. Կարասուկուրից ձեռքակալելու մասին Այ Մակրիզիի՝ վերը բերուած հաղորդման հետ:
76 Տե՛ս նոյն տեղում:
77 Al-Maqrizī, al-Sulūk, ǧ. 2.1, ǧ. 143.
78 Al-Nuwayrī, Nihāya, ǧ. 32, ǧ. 168.

նեաների սպանողի մասին խօսում են գրեթե բոլոր մամուլագրերի հեղինակները⁷⁹:

Ըստ պարսիկ Քաշանիի՝ Ասորիքեան զօրքը նախ գրաւում է Մալաթիայի շրջակայքը (կամ արուարձանները՝ *pīrāmūn-e Malatya*), ապա օղակում բուն քաղաքը, որը գրաւելով՝ Համատարած թալանի եւ աւարառութեան է ենթարկում: Մինչեւ 5 հազար հայեր եւ մուսուլմաններ կոտորւում են, աւերւում են տաճարներն ու մզկիթները, իսկ շուրջ 100 հազար տղամարդիկ, կանայք եւ երեխաներ էլ գերեզմարւում են⁸⁰: Չնայած թուերի ակնյայտ չափազանցութեանը՝ Քաշանիի հաղորդումն արտայայտում է թալանի եւ կոտորածի այն սարսափը, որին ենթարկուել է քաղաքի բնակչութիւնը, մասնաւորապէս հայութիւնը:

Ալ Նուվայրիի, ինչպէս նաեւ Ալ Մակրիզիի պատումից լրացնելի է նաեւ այն, որ Մելիտինէի գրաւման ժամանակ յայտնաբերուել է բրդեայ կտոր գործող 19 հազար հաստոց (*nawl yansiḡu al-ṣūf*) եւ գերիների հետ տեղափոխուել է Հալէպ⁸¹: Այս տեղեկութիւնը յստակ ապացոյց է քաղաքի ար-

հետազոտական հզօր կարողութիւնների, որոնցում գլխաւոր դերն, անշուշտ, պատկանում էր հայ բնակչութեանը:

Քաղաքի առումից անմիջապէս յետոյ էմիր Սայֆ ալ Դին Կալլիսը եւ Նասիր ալ Դին Դաւադարը շտապում են Կահիրէ՝ Մալաթիայի գրաւման աւետիսն օր առաջ սուլթանին հաղորդելու: Նրանց Դամասկոս հասնելու ժամանակ քաղաքը մօտ մէկ շաբաթ զարդարւում է, եւ միջնաբերդում աւետիսի նուագարաններ են հնչեցւում: Էմիրները փոստային ճիւղով Դամասկոսից Կահիրէ են ուղեւորւում Մուհարամի 29-ին (մայիսի 5)⁸²: Անանուն մամուլը հեղինակը վկայում է, որ Կալլիսը Կահիրէ է հասել Սաֆար ամսի 3-ին (մայիսի 9): Նրա հասնելուց յետոյ Կահիրէում 3 օր շարունակ աւետիսի ծնծղաներ են հնչել: Էմիրը պատուոյ հագուստների է արժանացել սուլթանի կողմից եւ կրկին վերադարձել Ասորիք⁸³:

Ինչ վերաբերում է Մելիտինէում գտնուող մամուլագրերի, այն քաղաքում մնում է միայն մէկ օր, եւ Մուհարամ ամսի 24-ին (ապրիլի 30, օրը՝ չորեքշաբթի) արդէն յետդարձի ճանապարհ է բռնում դէպի Այնթապ: Ալ Նուվայրիի եւ Ալ Մակրիզիի վկայում են, որ Մալաթիայից հեռանալով՝ Թանքիզն այնտեղ է թողել Հալէպի էմիր Բադր ալ Դին ալ Ազքաշին՝ մի զօրագնդի հետ⁸⁴: Այնթապից մուսուլմանական զօրքը շարժուել է դէպի Մարջ Դաբիկ: Աբու ալ Ֆիդան գրում է. «Յետոյ մեկնեցինք՝ վերադառնալով [մեր] երկիր, մինչեւ որ այդ տարուայ Սաֆար ամսի 3-ին՝ հինգշաբթի օրը (1315 թ. մայիսի 8), հասանք Մարջ Դաբիք եւ որոշ ժամանակ այնտեղ մնացինք: Այդ ժամանակ Ռումի երկրում էր գտնուում Ջուբանը (Չորանը),

79 St' u Ibn al-Dawādārī, *Kanz*, ց. 9, ք. 285; al-Birzālī, *al-Muqtafi*, ց. 4, ք. 178; al-Şafadī, *Nuzhat al-mālik*, ք. 222; Mufaḍḍal, *al-Nahğ al-saḍīd*, ք. 751 [245]; al-Yāfi'ī, *Mirāt al-ğinān wa-'ibrat al-yaqzān fi ma'rifat mā yu'tabar min ḥawādīḡ al-zamān, bi-tahqīq Ḥalīl Mansūr*, ց. 4, Dār al-kutub al-'ilmiyya, Bayrūt, 1997, ք. 191; Ibn Kaṡīr, *al-Bidāya*, ց. 18, 142-143; Ibn Ḥabīb, *Tagkirat al-nabīh*, ց. 2, ք. 66; al-Maqrīzī, *al-Sulūk*, ց. 2.1, ք. 143:
80 St' u Kaṡānī, *Tārīḡ Ulğaytu*, ք. 172:
81 St' u al-Nuwayrī, *Nihāya*, ց. 32, ք. 168 եւ հմմտ. al-Maqrīzī, *al-Sulūk*, ց. 2.1, ք. 143: Մամուլագր-ծուրիւնը, ինչպէս երևում է, քաղաքի բնակչութեան շրջանում ամենատարածուած արհեստներից էր: Քաղաքի քրիստոնէայ ջուլիակների մասին ակնարկ կայ մաւռ Բար Հեբրէուսի ժամանակագրութեան մէջ: St' u *The Chronography of Gregory Abū'l-Faraj [Bar Hebraeus]*, The son of Aaron, The Hebrew Physician, The first part of his Political History of the World, vol. I, trans. Ernest A. Wallis Budge, Oxford University Press, London, 1932 (reprinted by Gorgias Press, 2003), p. 408:

որ նարբանդայի կառավարիչն էր [այնտեղ], եւ նրա տրամադրութեան տակ մեծաքանակ զօրք կար: Մենք պատրաստ էինք, բայց նա չչարժուեց մեր դէմ: Եւ նոյնիսկ մեր գնալուց յետոյ էլ բաւական ժամանակ դեռ Մալաթիա չեկաւ: Մենք դեռ շարունակեցինք Մարջ Դաբիկում մնալ»⁸⁵: Կապաններն անցնելիս, սակայն, քուրդ Մանդուհը, որ գերիների թւում էր, կարողանում է ճողոպրել: Վերջինս, որ յանձնուել էր էմիր Սայֆ ալ Դին Կուլլիի հսկողութեանը, փախչում է իրեն հսկելու նշանակուած մի մոնղոլ մամուլքի հետ⁸⁶:

Մարջ Դաբիքում Թանքիզը հրամայում է վերահաշուել գերիներին եւ նրանց մէջ եղած մուսուլմաններին ազատ արձակել: Ալ Սաֆարին այդ մասին գրում է. «Վերահաշուեցին գերիներին եւ ով որ մուսուլման տղամարդ կամ մուսուլման կին դուրս եկաւ, վերցրին եւ տուեցին նրա ազգակիցներին, իսկ ով ազգական չունէր, կառավարչի [Հոգածութեանը յանձնեցին]՝ վճարելով ծախսերի եւ հագուստի համար, ոմանց ամուսնացրին: [Այսպէս] ազատութիւն տուեցին բոլոր մուսուլմաններին, եւ գերութեան մէջ մնացին միայն հայերը»⁸⁷:

Սրանով Մելիտինէի հայ բնակչութեանը պատուհասած աղէտը չի աւարտուել: Ըստ Ալ Նուվայրիի՝ էմիր Թանքիզի եւ զօրքի հեռանալուց երեք օր անց քաղաք էր վերադարձել հայ բնակչութեան այն մասը, որը թաքստոց էր մտել սպանողից եւ թալանից իրուսափելու համար: Այդժամ էմիր Ալ Ազքաշիի գնդերը՝ Քախթա եւ Քարքար բերդերի մամուլքեան կայազօրերի հետ զինակցած, վերստին անակնկալի են բերել Մալաթիայի առումից մազապուրծ եղած հայերին: «Նրանց միացան Քախթայի եւ Քարքարի բնակիչներն ու շրջապատեցին նրանց եւ սպանեցին 300 հայերի, 100 հո-

գու գերի վերցրին, աւար վերցրին մեծ քանակութեամբ կտորեղէն եւ ապրանքներ, տեղափոխեցին գարին եւ հացահատիկը»⁸⁸: Մուհարդալը նոյնպէս խօսում է այս դէպքի մասին՝ վկայակոչելով յիշեալ Ալ Ազքաշիի մի հօրեղբորորդու ասածը⁸⁹: Իսկ Ալ Բիրզալին աւելացնում է, որ գերիներից 60-ին տեղափոխել են Հալէպ, ուղարկել են նաեւ սուլթանին հասանելիք մէկ հինգերորդ մասը⁹⁰: Ալ Նուվայրիի գրում է, որ այս դէպքից յետոյ քաղաքը մամուլքներին յանձնած Մալաթիայի իշխանաւորներին՝ Բադր ալ Դին Միզամիրին, նրա որդուն, փեսային եւ ուրիշներին (թւով մօտ 30 հոգի), պատրաստուել են հսկողարկելու սուլթանութիւն: Սաֆար ամսի սկզբին նրանք արդէն Դամասկոսում էին: Նոյն ամսի կէսերին Դամասկոս է հասել նաեւ Մալաթիայի կողմից Միզամիրի հարեմի եւ եւս 150 հոգու հետ: Նրան կարգադրուել է, որ մնայ Դամասկոսում, իսկ միւսները շարունակել են ճանապարհը դէպի Կահիրէ⁹¹: Դամասկոսից Ալ Բիրզալին հաստատում է, որ Սաֆարի 26-ին գերիների հետ քաղաք է ժամանել Սայֆ ալ Դին Կալլիսը⁹²:

Առանձին ուշադրութեան է արժանի նաեւ այն հանգամանքը, որ Մալաթիայի գրաւումը չի բերել մոնղոլ-մամուլքեան ռազմական լայնածաւալ գործողութիւնների: Ինչպէս տեսանք, ըստ Աբու ալ Ֆիդայի՝ մոնղոլ զօրապետ Չօրանը չի շտապել հետապնդել մամուլքեան զօրքին: Նա հաւանաբար այդ պահին վստահ չի եղել իր ուժերին, ուստի եւ խուսափել է Մալաթիա շարժուելուց՝ սպասելով դէպքերի յետագայ զարգացմանը: Ըստ ամենայնի, քա-

85 Abū al-Fida', *Kitāb al-Muḥtaṣar*, ց. 4, ք. 75.
86 St' u Այն տեղում:
87 St' u al-Şafadī, *Nuzhat al-mālik*, ք. 222:
88 Al-Nuwayrī, *Nihāya*, ց. 32, ք. 169.
89 Mufaḍḍal, *al-Nahğ al-saḍīd*, ք. 751 [245].
90 Al-Birzālī, *al-Muqtafi*, ց. 4, ք. 178. Քախթայի ամուսնուած է Քախթայի, իսկ Քարքարը՝ Քախթայի, ինչը հասանաբար գրչական սխալագրութեան թեստաւն է:
91 Al-Nuwayrī, *Nihāya*, ց. 32, ք. 169.
92 Al-Birzālī, *al-Muqtafi*, ց. 4, ք. 178.

85 Abū al-Fida', *Kitāb al-Muḥtaṣar*, ց. 4, ք. 75.
86 St' u Այն տեղում:
87 St' u al-Şafadī, *Nuzhat al-mālik*, ք. 222:

ղաքի գրաւման ժամանակ զօրապետ Չօբանը զբաղուած էր զօրք հաւաքագրելով՝ մամլուքեան զօրքի յետագայ առաջխաղացումը կասեցնելու նպատակով: Նոյնը կարելի է ասել նաեւ սուլթանութեան զօրքի մասին: Ակնյայտ է, որ սուլթան Ալ Նասիրի ռազմական ձեռնարկումը տեղային բնոյթ ունէր եւ Ռումի տարածք խորանալու եւ այն ամբողջութեամբ նուաճելու նպատակ էր հետապնդում: Սա հաստատուում է Ալ Այնիի հետեւեալ պնդմամբ. «Ասում են, որ զօրքի Մալաթիայում [այսօր քան] կարճ մնալու պատճառն այն էր, որ Դանքիզի մօտ մի մարդ էր եկել եւ այն գաղտնիքը յայտնել, որ [նրանցից] թուճեհի (10 հազար հեծեալ) հրամանատար մի ամիր⁹³ է ճանապարհուել ձեր ուղղութեամբ, որ իր տրամադրութեան տակ վիթխարի բանակ ունի՝ կազմուած մոնղոլներէր, վրացիներէր, հայերէր եւ այդ երկրների զօրքերից: Նա ուզում է ձեզ բռնացնել անուշադրութեան վրայ (այն է՝ անակնկալի բերել): Երբ էմիր Դանքիզը լսեց սա, հրամայեց, որ [փութով] մեկնեն, քանի որ անելու էլ գործ չէր մնացել. քաղաքը գրաւելու, [բնակիչներին] ջարդելու, կողոպտելու, գերեզմարելու եւ Մալաթիան աւերելու եւ նրա տիրոջը բռնելու նրանց բոլոր նպատակները ի կատար էին ածուած: Ուստի աճապարեցին վերադառնալ, որպէսզի չհանդիպեն նրանց եւ զօրքին յանկարծ որեւէ վնաս չլինի: Շարժուեցին, մինչեւ որ Հալէպ հասան, ապա՝ Դամասկոս, ինչպէս որ պատմեցինք: [Ճշմարիտը միայն] Ալլահը գիտի»⁹⁴:

Այնուհանդերձ, Մալաթիայի գրաւումը արշաւանքի միակ նպատակը չէր: Երկրորդ սայրով այն իրականում ուղղուած էր նաեւ Կիլիկեան Հայաստանի դէմ: Այս հանգամանքը ցայսօր հայագիտութեան մէջ անհրաժեշտ անդրադարձի եւ վերլուծու-

93 Հաւասարաբ Գիւտի է առնուած հէնց Չօբանը:
94 Al-'Aynī, 'Iqd (Veliyuddin 2394), էջ 35-36:

թեան չի արժանացել մամլուքեան արաբալեզու աղբիւրներին ծանօթ չլինելու պատճառով: Նախ տեսնենք, թէ ինչ է այդ մասին ասում Աբու ալ Ֆիդան: Նա գրում է, որ Մարջ Դաբիկում, բացի գերիների վերաբաշխումից եւ մուսուլմաններին ազատ արձակելուց, «քանիցս դեսպաններ ուղարկուեցին Սսի երկրի տէր Օշին իբն Լիֆուհի մօտ՝ պահանջելով վերադարձնել Ջայհան գետից հարաւ ընկած հողերը եւ աւելացնել սուրբը, այն է՝ հարկը»⁹⁵: Փաստօրէն, հէնց սա նկատի ունի Ալ Մակրիզին, երբ գրում է, թէ «տպաւորութիւն կար, որ զօրաշարժն ուղղուած էր Սսի դէմ», իսկ մէկ այլ տեղում «[սուլթանը] զօրք պատրաստեց՝ ձեւացնելով, թէ այն ուղեւորում է Սիս»⁹⁶: Ակնյայտ է, որ իրականում, Մալաթիան գրաւելու համար մեկնած զօրքը Կիլիկեան Հայաստանի սահմանագծին կենտրոնացնելով եւ հայոց թագաւորութիւն մօտալուստ ներխուժման առերեւոյթ վտանգ ստեղծելով, սուլթան Ալ Նասիրը ցանկանում էր սարսափ ներշնչել Օշինին եւ նրանից տարածքային զիջումներ կորզել կամ առնուազն հասնել տարեկան հարկի բարձրացման: Սուլթանի «մէկ կրակոցով երկու թիրախ խոցելու» այս խորամանկ քայլը հաւանաբար իրարանցում էր ստեղծել հայոց արքունիքում՝ ստիպելով բանակցութիւնների մէջ մտնել մամլուքների հետ: Ընդ որում, ըստ ամենայնի, հայոց արքունիքի հետ բանակցութիւններն այս հարցի շուրջ սկսուել են, երբ դեռ մամլուքեան բանակը Մալաթիայի ճանապարհին էր, եւ տակաւին պարզ չէր, որ արշաւանքի իրական ուղղութիւնը Կիլիկիան է: Մելիտինէի առումից յետոյ, հետդարձի ճանապարհին կրկին զօրքը հայոց թագաւորութեան սահմանին հաւաքելով, մամլուքեան իշխանութիւնները վերստին զգուշացրել են հայոց թագաւորին: Օրհասական ընտրութեան առաջ

95 Abū al-Fidā', Kitāb al-Muḥtaṣar, ց. 4, թ. 75.
96 Al-Maqrīzī, al-Sulūk, ց. 2.1, թ. 143.

կանգնած լինելով՝ Օշինը գերադասել է ինչ-որ կերպ բաւարարել սուլթան Ալ Նասիրի առաջ քաշած պահանջները, քան թէ երկիրը ենթարկել աւերածութեան ու թաւանի փորձութեանը:

Այս միջադէպի մասին մի բացառիկ տեղեկութիւն էլ գտնում ենք Ալ Ումարիի (մահ. 1349 թ.) al-Ta'rif bi-muṣṭalah al-šarīf երկում, որը պաշտօնական գրագրութեան ու քարտուղարութեան (al-inšā') ձեռնարկների ժանրի աշխատութիւն է: Նրանում, խօսելով al-muṣāṣāḥa-ների (հաշտութեան պայմանագրի կամ պայմանաւորուածութեան չեղարկման, զրոյացման, անվաւեր ճանաչման մասին գրութիւններ) տեսակների մասին, հեղինակը մի ուշադրաւ օրինակ է բերում. «Իմ հօրեղբայր Շարաֆ ալ Դին Աբու Մուհամմադ Աբդ ալ Վահհաբը, Ալլահը ողորմի նրան, իսլամական զօրքի Մալաթիա մտնելու տարում՝ [հիջրայի] 714 թ. (1314/1315 թթ.), մի fash (միակողմանի չեղարկում) է գրել «Սսի իշխող» թագաւորի համար, ինչի պատճառը նրա հարկահատի աւելացումն էր (lianna zāda qaṣī'atuhū)»⁹⁷: Ալ Ումարին, ցաւօք, չի մէջբերում այդ գրութեան տեքստը: Բայց պարզում ենք, որ Ալ Ումարիի հօրեղբայրը մեզ արդէն քաջածանօթ Շարաֆ ալ Դին Աբու Մուհամմադ Աբդ ալ Վահհաբ իբն Փադլ Ալլահ ալ Ումարին էր՝ Դամասկոսի դիւանապետը, ով կադի Նաջմ ալ Դին իբն Սասրայի հետ զօրքին ուղեկցում էր դէպի Ռումի երկիր՝ առժամանակ հանգրուան գտնելով Այնթաբում:

Օշինը հարկադրուած է լինում ընդունել սուլթանի պահանջներից մէկը. Կիլիկեան Հայաստանի համար սահմանուած

97 Sū' al-'Umārī, al-Ta'rif bi-l-muṣṭalah al-šarīf, bi-tahqīq Muḥammad Ḥusayn Šams al-Dīn, Dār al-kutub al-'ilmīyya, Bayrūt, 1988, թ. 214-215, ինչպէս նաեւ al-Qalqašandī, Ṣubḥ al-a'šā, ց. 14, թ. 108: Արդ ալ Վահհաբի կենսագրութիւնը տե'ս Ibn al-Suqā'ī, Tālī Kitāb waḥayāt al-a'yān, bi-tahqīq Ğaklīn Sublī, Dimašq, 1974, թ. 181:

տարեկան հարկը բարձրացուած է: «Այդպէս հարկը բարձրացուեց՝ դառնալով մօտ 1 մլն. դիրհամ», - արձանագրել է Աբու ալ Ֆիդան⁹⁸: Մեզ համար կարեւոր այս տեղեկութիւնը հաւաստում է նաեւ Քաշանին. «[Ապա] Սսի եւ Այասի թագաւորի մօտ [դեսպան] ուղարկեցին եւ նրանից հարկադրանքով եւ բռնութեամբ (be-qahr wa-zağr) մէկ միլիոն դրամ խլեցին եւ իրենց արշաւանքը փառաւոր, իսկ ջանքը գովարժան համարելով՝ նահանջեցին»⁹⁹:

Ըստ էութեան, այս ամբողջ ընթացքում, երբ բանակցութիւններ էին վարում հայոց արքունիքի հետ, մամլուքեան բանակը շարունակում էր Մարջ Դաբիկում մնալ: Միայն հայոց արքայի հետ համաձայնութեան գալուց յետոյ է, որ մուսուլմանական զօրքը յետ է դառնում: Աբու ալ Ֆիդան գրում է. «Մենք Մարջ Դաբիկից շարժուեցինք Ռաբի առաջին ամսի 2-ին՝ հինգշաբթի օրը (1315 թ. յունիսի 5), եւ Համա հասանք Ռաբի առաջին ամսի 9-ին՝ հինգշաբթի օրը (յունիսի 12): Իմ ժամանումից երկու օր անց էմիր Սայֆ ալ Դին Թանքիզը եկաւ մնացեալ զօրքի հետ, եւ նրա համար հիւրասիրութիւն կազմակերպեցի իմ տանը, որ Համա քաղաքում է գտնուում: Նա եւ միւս էմիրները մնացին մինչեւ կիրակի օրը՝ Ռաբի առաջին ամսի 12-ը (1315 թ. յունիսի 15), յետոյ յիշեալ օրը մեկնեցին Դամասկոս»¹⁰⁰: Ալ Բիրզալին շարունակում է, որ արդէն Ռաբի առաջին ամսի 16-ին՝ ուրբաթ օրը առաւօտեան, Թանքիզը եգիպտական եւ ասորիքեան զօրքերի հետ ժամանեց Դամասկոս, եւ ժողովուրդը մեծ խնդրութեամբ դուրս եկաւ նրանց դիմաւորելու¹⁰¹: Եգիպտացիները ո-

98 Abū al-Fidā', Kitāb al-Muḥtaṣar, ց. 4, թ. 76.
99 Kašānī, Tārīḥ Ulğaytu, թ. 172.
100 Abū al-Fidā', Kitāb al-Muḥtaṣar, ց. 4, թ. 77.
101 Ըստ Իբն Հաբիբի՝ խատիբ Նաջմ ալ Դին Աբու Մուհամմադ ալ Հասան իբն Մուհամմադ ալ Փարաշի ալ Սաֆադիս բէյթեր է ձօնել էմիր Սայֆ ալ Դին Թանքիզին՝ շնորհատրելով Մալաթիայի

րոշ ժամանակ մնացին, յետոյ ճանապարհուկեցին դէպի Կահիրէ¹⁰²:

Այժմ դիմենք Կահիրէում գտնուող Անանուն հեղինակին: Ըստ նրա՝ Ռաբի առաջին ամսի 19-ին՝ երկուշաբթի օրը, սուլթանութեան մայրաքաղաք ժամանեց էմիր Կալիբը՝ «իր հետ բերելով Մալաթիայից վերցուած գերիններին՝ 350 հոգու»¹⁰³: Սրանք այն հայերն էին, որոնք գերեզմարտել էին քաղաքի վրայ երկրորդ յարձակման ժամանակ, երբ դուրս էին եկել իրենց թաքստոցներից եւ ծուղակն ընկել: Ըստ նոյն հեղինակի՝ վերջապէս Ռաբի ալ Ախար ամսի 5-ին՝ երեքշաբթի օրը, Կահիրէ հասան արշաւանքն առաջնորդած միւս էմիրները: Վերադառնալուն պէս բոլոր հրամանատար հազարապետ էմիրները պատուոյ հագուստների արժանացան¹⁰⁴: Հնարաւոր է՝ Օշինը, չնայած ձեռք բերուած պայմանաւորութեանը, ուշացրել է հարկի վճարումը, ինչը պատճառ է դարձել պատժիչ գործողութիւնների: Հաւանաբար հէնց սա նկատի ունի Ալ Նուվայրին, երբ գրում է. «Այդ տարում՝ զօրքի Մալաթիայից վերադառնալուց յետոյ, հալէպեան մի զօրախումբ մէկը միւսի յետեւից յարձակումներ գործեց Սահ երկրի վրայ՝ աւարառելով, սպանելով եւ գերեզմարելով»¹⁰⁵:

Ինչ վերաբերում է քաղաքը մամլուքների ձեռքը մատնած Միզամիրին եւ միւս մուսուլման մեծամեծներին, ապա նրանք յարգալից ընդունելութեան արժանացան սուլթանութիւնում: «Մալաթիայի կառավարիչը, նրա որդին եւ փեսան լաւ վերաբերմունքի արժանացան սուլթանի կողմից, ով նրանցից իւրաքանչիւրին ռազմաւատ (iqṭā') եւ սպառազինութիւն շնորհեց»,-

գրում է Ալ Նուվայրին¹⁰⁶: Իսկ Իբն Քասիրի տեղեկութիւնը վերաբերում է Մալաթիայի կառիին. «Ջումադա ալ Ախիրա ամսի 16-ին՝ չորեքշաբթի օրը, Մալաթիայի կառին սկսեց դասաւանդել Ալ Խաթունի յաբրոցում՝ փոխարինելով հանֆիական գերագոյն կառի Ալ Բուսրաւիին: Նրա մօտ էին գալիս [շատ] երեւելիներ: Նա գերազանց մարդ էր՝ մեծապատիւ եւ բարի վարքով: Նա Մալաթիայի կառի եւ քարոզիչ էր եղել մօտ քսան տարի»¹⁰⁷:

Տարածուած տեսակէտի համաձայն՝ Մալաթիայի 1315 թ. գրաւումից յետոյ քաղաքը վերջնականապէս մաս է կազմել Մամլուքեան սուլթանութեան: Այս տեսակէտը, հետազօտողների կողմից փոխի-փոխ ընդունուելով, ամրապնդուել է գիտական գրականութեան մէջ: Դեռ 1919 թ. «Իսլամի առաջին հանրագիտարանում»՝ Մալաթիայի մասին յօդուածում, է. Հոնիգմանը, ներկայացնելով Մալաթիայի առման մասին Աբու ալ Ֆիդայի վերելում արդէն քննարկուած տեղեկութիւնները, գրել է. «Սուլթանը Մալաթիայի տարածքը վերածել է առանձին սահմանային նահանգի, որն իր մէջ ներառում էր եօթ շրջան»¹⁰⁸: Հոնիգմանի տեղեկութեան աղբիւրը Ժ. Ղարի հեղինակ Խալիլ Իբն Շահին ալ Ջահիրի (մահ. 1468 թ.) *Zubdat kaṣf al-mamālik* երկն է: Վերջինս, խօսելով իր կեանքի օրօք սուլթանութեանը ենթակայ տարածքների մասին, անդրադառնում է նաեւ Մալաթիային. «Ինչ վերաբերում է

106 Տե՛ս նոյն տեղում:
107 Ibn Kaṣīr, *al-Bidāya*, ց. 18, ք. 142-143: Կառիի մասին կենսագրական-մահախօսական յօդուածներ են պահպանել նաեւ Իբն ալ Սուկայիմ եւ Ալ Բիրզալի: Ըստ Ալ Սուկայիի՝ կառին ինքն է Էմիր Թամրիզի խնդրել Դամասկոսում մնալ, եւ վերջինս չի մերժել: Տե՛ս Ibn al-Suqā'i, *Tāliq*, ք. 185-186; al-Birzālī, *al-Muqtafi*, ց. 4, ք. 369:
108 E. Honigmann, *Malatya // The Encyclopaedia of Islam. A Dictionary of Geography, Ethnography and Biography of Muhammadan Peoples*, E. J. Brill, Leiden, 1927 (reprinted in 1993), p. 197.

գրումսն կապակցութեամբ: Տե՛ս Ibn Habib, *Tagkirat al-nabīh*, ց. 2, ք. 66:
102 Al-Birzālī, *al-Muqtafi*, ց. 4, ք. 185.
103 Al-Mu'allif al-mağhūl, ք. 163.
104 Տե՛ս նոյն տեղում:
105 Al-Nuwayrī, *Nihāya*, ց. 32, ք. 169.

Մալաթիա երկրամասին (քննարկում՝ *mamlakat Malatya*), ապա այն հրաշալի քաղաք է՝ հարուստ շրերով եւ հարթավայրային հողերում ծաւալուող պտղատու այգիներով: Ունի պարիսպներ եւ եօթ ամրոց-աշտարակ՝ Մուշար, Քումի, Կարահիսար, Քադարբիրթ, Ակջահ (Աքջա), Ն[ա]ուհամա, Կալաթ ալ Աքրադ (իմա՝ «քրդերի բերդ» - Գ. Դ.): Ընդգրկում է եօթ շրջան՝ բազմաթիւ գիւղերով, որ [հնում] Ռումի [երկրինն] էին եւ սուլթան Ալայ ալ Դինի տիրապետութեան տակ: [Սակայն] Ալ Մալիք ալ Նասիր Մուհամմադ Իբն Կալաուների օրօք այն գրաւուել է, եւ նա այն դարձրել է առանձին նահանգ (քննարկում՝ *mamlaka*, պէտք է հասկանալ՝ «փոխարքայութիւն» - Գ. Դ.), չնայած հիմա շատ մարդիկ կան, որ կարծում են, թէ այն Հալէպի նահանգի մաս է կազմում»¹⁰⁹: Խալիլ ալ Ջահիրի աւագ ժամանակակից Իբն ալ Շիհնան (մահ. 1485 թ.) նոյնպէս գրում է, թէ քաղաքը Մամլուքեան սուլթանութեան կազմում է յայտնուել Դամասկոսի փոխարքայ էմիր Թանքիզի կողմից 1315 թ. գրաւուելուց յետոյ, թէեւ սուլթան Ալ Նասիրին սխալմամբ անուանում է սուլթան Ալ Ջահիր¹¹⁰:

Տասնամեակներ անց «Իսլամի հանրագիտարանի» նոր խմբագրութեան մէջ Մալաթիայի «նախաստեանեան շրջանի

պատմութեան» վերաբերեալ նոր յօդուած էի գրուել, աւելին՝ զգալիօրէն կրճատուած ձեւով վերատպուել է է. Հոնիգմանի յօդուածը¹¹¹: Ա. Ալպոյաճեանն իր «Պատմութիւն Մալաթիոյ» աշխատութեան մէջ քաղաքի 1315 թ. գրաւման մասին տեղեկութիւնները փոխառել է «Իսլամի հանրագիտարանից»՝ եզրակացնելով. «Այսպէս ուրեմն Մալաթիա եւ շրջակայքը ենթարկուեցան եգիպտական տիրապետութեան»¹¹²: Թ. Սինքլերն իր *Eastern Turkey* աշխատութեան մէջ թէեւ չի նշել իր աղբիւրը, բայց կրկին գրել է, թէ 1315 թ. ի վեր Մալաթիան պնցել է մամլուքեան կառավարչութեան տակ¹¹³:

Այժմ ներկայացնենք այս տեսակէտը հերքող մեր փաստարկները: Նախ՝ վերելում վկայաբերուած տեղեկութիւններից արդէն գիտենք, որ մամլուքեան զօրքը քաղաքից հեռանալուց առաջ կրակի է տուել այն եւ քանդել պարիսպները: Եթէ մամլուքեան իշխանութիւնները քաղաքը նուաճելու եւ սուլթանութեանը բռնակցելու նպատակ ունենային, նրանք հաստատապէս կը խուսափէին այդ քայլից, աւելին՝ կ'ամրացնէին քաղաքը եւ այնտեղ մշտական կայազօր կը զետեղէին: Մեր այս տեսակէտն արտայայտուած ենք գտնում Բ. Ռաֆայէլի այն եզրակացութեան մէջ, թէ «նրանք (նկատի ունի մամլուքներին - Գ. Դ.) իրականում չէին ցանկանում բռնակցել Մալաթիան կամ այն վերածել սահմանային ամրութեան, որպէսզի տարածաշրջանը հսկէին»¹¹⁴:

109 Gara al-Dīn Ḥaīm [Ibn] Ṣahīn al-Zahīrī, *Zubdat kaṣf al-mamālik wa-bayān al-ḥurūq wa-l-masālik* (*Zoubdat kachf el-mamālik; tableau politique et administratif de l'Égypte, de la Syrie et du Hidjaz sous la domination des sultans mamlooks du XIII au XV siècle*), 1894, texte Arabe publié par Paul Ravaisse, Imprimerie Nationale, Paris, 1894, ք. 52: Դժուար չէ նկատել, որ ամրոց-աշտարակների մէկի անուանումն ակնյայտօրէն հայկական ծագում ունի. Քաղարքիթը, ըստ ամենայնի, կատարբեր քառի տառադարձումն է: Իսկ Ն[ա]ուհամամ պարսկերէնից թարգմանած կը նշանակի «նոր բաղնիք»:
110 Ibn al-Ṣīḥna, *al-Durr al-muntahab fī tāriḥ mamlakat Ḥalab, bi-tahqīq 'Abd Allāh Muḥammad Darwīṣ, Dār al-kitāb al-'arabī, Dimaṣq*, 1984, ք. 198.

111 E. Honigmann, *Malatya // The Encyclopaedia of Islam* (New Edition), vol. VI (MAHK-MID), E. J. Brill, Leiden, 1991, pp. 230-231.
112 Ա. Ալպոյաճեան, *Պատմութիւն Մալաթիոյ Քաղաքի: Տեղագրական, պատմական, եւ ազգագրական*, Բու. Ա, տպ. Սեւան, Պէրոյթ, 1961, էջ 277-278:
113 T. A. Sinclair, *Eastern Turkey: an Architectural and Archaeological Survey*, vol. III, The Pindar Press, London, 1989, p. 3, 156.
114 K. Raphael, *Muslim Fortresses*, p. 115.

Այն մասին, որ մամլուքները 1315 թ. դէպքերից յետոյ վերջնականապէս չեն տիրացել Մալաթիային, վկայում են հէնց մամլուք պատմիչները: Համայն տէր Աբու ալ Ֆիդան, ճիշտ է, այդ մասին լուում է, բայց միւս հեղինակներից մի քանիսի պատուաները լրացնում են: Նրանցից մասնաւորապէս Ալ Բիրզալին վկայում է. «Այդ բանից յետոյ Չօբանը եկաւ Մալաթիա եւ ապահովութեան երաշխիք տուեց նրանց, ովքեր մնացել էին: Նա փակել տուեց նրա բոլոր դարպասները, որոնք եօթն էին, եւ միայն մէկը թողեց բաց՝ այգիներ դուրս գալու համար: Նա եղած բնակչութեանն արտօնեց վերաշինում կատարել [քաղաքում] տեղակայելով երկու հազար թաթարների [կայազօր]»¹¹⁵: «Ինչ վերաբերում է Մալաթիային, ապա այնտեղից [մամլուքեան] զօրքի վերադարձից յետոյ, այնտեղ հասաւ Ջուբանը (Չօբանը)՝ թաթարների արքայ Խարբանդայի կառավարիչը, ով այն նրան էր տուել՝ ապահովութեան երաշխիք տալով այնտեղ մնացած մուսուլմաններին: Նա փակել տուեց քաղաքի դարպասներից վեցը՝ բաց թողնելով միայն մէկը, որը հսկելու համար երկու հազար հեծեալ թողեց: Ապա կարգադրեց վերաշինել այն, ինչ որ աւերուել էր»¹¹⁶, երկրորդում է Ալ Նուվայրին: Իբն Քասիրը լրացնում է Ալ Նուվայրին. «...եկաւ Չօբանը եւ վերականգնեց այն եւ մեծ թուով հայերի եւ այլոց վերադարձրեց այնտեղ»¹¹⁷: Պատմիչների վկայութիւնները գալիս են ապացուցելու, որ մամլուքեան զօրքի հեռանալուց յետոյ մոնղոլները կրկին իրենց հսկողութիւնն են հաստատել քաղաքում, եւ ոչ միայն վերականգնել են Մելիտինէն, այլեւ փախուստով մահից մազապուրծ եղած բազմաթիւ հայերի են բերել եւ վերաբնակեցրել այնտեղ: Քաղաքը, այնուամենայնիւ, ինչպէս երեւում է,

115 Al-Birzālī, *al-Muqtafi*, ց. 4, ք. 189.
 116 Al-Nuwayrī, *Nihāya*, ց. 32, ք. 169.
 117 Ibn Kaṣīr, *al-Bidāya*, ց. 18, ք. 143.

տեւական ժամանակ ուշքի չի եկել դժոխային փորձութեան քնից, որին գումարուել է նաեւ բնութեան տարերքը: Ալ Բիրզալիի հաղորդմամբ՝ «դրանից յետոյ մորեխները պատճառով Մալաթիայում հացահատիկի եւ պտուղների մեծ պակասորդ է եղել»¹¹⁸: Ամփոփելով վերոբերեալ տեղեկութիւնները՝ կարող ենք եզրակացնել, որ 1315 թ. առումից յետոյ Մալաթիան դեռեւս մաս չի կազմել Մամլուքեան սուլթանութեան: Քաղաքը, մեր կարծիքով, մոնղոլների կողմից վերահսկող տարածք է եղել առնուազն մինչեւ 1330-ական թթ. կէսերը, այսինքն՝ ընդհուպ մինչեւ Իլխանութեան կործանումը: Կենտրոնական իշխանութեան բացակայութեան պայմաններում նախկին Ռումի սելջուկեան սուլթանութեան տարածքում ձեւաւորուել են թիւրք-թուրքմենական բէյլիքներ, որոնցից շատերը վասալական կախուածութիւն ունէին Մամլուքեան սուլթանութիւնից: Իլխանութեան կործանումից յետոյ Մալաթիան նախ մի քանի տարի մաս է կազմել ոյդուր զօրապետ Հրետնայի ստեղծած պետութեան (1335-1381 թթ.)¹¹⁹: Եւ, ըստ հուլթեան, քաղաքը միայն 1330-ական թթ. վերջերից է յայտնուել Մամլուքեան սուլթանութեան վերահսկողութեան տակ, երբ Հրետնան ընդունել է մամլուք սուլթան Ալ Մալիք ալ Նասիրի սիւզերենութիւնը¹²⁰:

118 Al-Birzālī, *al-Muqtafi*, ց. 4, ք. 189.
 119 Ibn Haldūn, *al-Ibar*, ց. 5, ք. 630.
 120 Էրեսնայի մասին տե՛ս al-Şafadī, *al-Wāfi*, ց. 8, ք. 219, ինչպէս նաեւ Ibn Hāgar al-Asqalānī, *Al-Durar al-kāmina fi a'yān al-mi'a al-īmina*, ց. 1, bi-tahqīq Sālim al-Karnakāwī, Haydarābād, 1929, ք. 348-349: Մամլուքեան իշխանութիւնը Մալաթիայում, այնուամենայնիւ, երբեք էլ ամուր եւ հաստատուն չի եղել: Այստեղ երբեմն-երբեմն բռնկուել են հակամարտութեան ընդվզումներ: Բացի այդ, քաղաքը ժամանակ առ ժամանակ կոտախնդր է եղել սուլթանութեան եւ հարեան Ջուկադիդների բէյլիքի (1337-1512 թթ.) միջեւ: 1399 թ. Մալաթիայի կարճ ժամանակով տիրացել է օսման սուլթան Բայազիդ Ա-ը, մէկ տարի

Այնուամենայնիւ, Մամլուքեան աղբիւրներում Մալաթիայի՝ Մամլուքեան սուլթանութեան մաս կազմելու յստակ թուական չենք գտնում¹²¹: Այս աղբիւրներում Մալաթիայի մասին յիշատակութիւններ չենք գտնում ընդհուպ մինչեւ Ժ. Դ. 70-ական թուականները: Յատկանշական է, որ մամլուքեան հեղինակ Ալ Ումարին, ով իր *al-Ta'rif* երկն աւարտել է 1334 թ., սուլթանութեան վարչական բաժանման մասին խօսելիս Մալաթիայի փոխարքայութիւն անունով վարչական միաւոր չի յիշատակում: Նա Հալէպի փոխարքայութեան սահմաններն այսպէս է բնութագրում. «Այն հիւսիսից սահմանակցում է Ռումի երկրին, որ Բեհեսնայից այն կողմ է, եւ հայոց երկրին, որ Ջահան (իմա՝ Ջէյհան, Պիրամոս – Գ. Դ) գետից այնկողմ է, իսկ արեւմուտքից՝ Ասորիքեան ծովի (իմա՝ Միջերկրական ծով – Գ. Դ.) առափնեայ այն վայրերին, որ վերցուել են հայոց երկրից»¹²²: Մոնղոլական Իլխանութեան մատենագիր Համդալլահ Մուսթաուֆի՝ Կազուինին (Ղազուինին), ով իր *Nuzhat al-qulūb* («Մտերի զուարճութիւն») երկն աւարտել է Ժ. Դ. դարի 40-ական թուականներին, ի շարս Ռումի քաղաքների բնութագրում է նաեւ Մելիտինէն. «[Մալաթիան] գտնուում է Չորրորդ իկլիմում (աշխարհագրական

անց՝ 1400 ք., Լեւոն Թեմուրը: 1516 թ. Մալաթիան վերջնականապէս մաս է կազմել Օսմանեան կայսրութեան:
 121 Արու ալ Ֆիդան, ով իր ժամանակագրութիւնից բացի, նաեւ Taqwīm al-buldān վերնագրով աշխարհագրական երկ է հեղինակել, Մալաթիայի մասին բառայօդուածում նկարագրում է քաղաքը՝ Աշտիվ, որ այն գտնուում է Ռումի երկրում: *St'u Abū al-Fidā', Taqwīm al-buldān* (Géographie d'Aboulféda, ed. M. Reinaud et W. Mac Guckin de Slane, Paris, 1840), ք. 384-385: Արու ալ Ֆիդայի այս երկը վկայակոչելով՝ Ալ Կալիպազանդին գրում է, «որ այն գրաւուել է հիջրայի 715 ք.», թէև Taqwīm-ի մեզ հասած բնագրում քաղաքի գրաւման թուականը նշուած չէ: *St'u al-Qalqaşandi, Suḥb al-a'sā*, ց. 4, ք. 132:
 122 *St'u al-'Umārī, al-Ta'rif*, ք. 232:

գտնում – Գ. Դ.)՝ 71 աստիճան երկայնութեան եւ 39 աստիճան լայնութեան վրայ: Այստեղ մի ամրակուռ ամրոց կայ, որը *Arqalūdiyāh* (՝) են կոչում: Պտղոմէոսը՝ «Ալմագեստի» հեղինակը, Մալաթիայից էր (ակնյայտ սխալ է – Գ. Դ.): Այն մեծ քաղաք է՝ գերազանց կլիմայով, հոսող ջրերով եւ արձակ արօտավայրերով: Նրա մշակաբոյսերն են եգիպտացորենը, բամբակը, խաղողը եւ շատ մրգեր»¹²³: Ռումի շատ քաղաքների համար Համդալլահ Ղազուինին նշում է այն հարկաչափերը, որ յիշեալ քաղաքները մինչեւ Ժ. Դ. դարի 30-ական թուականների կէսերը վճարում էին Իլխանութեան զանձարան: Մալաթիայի դէպքում ոչինչ նշուած չէ, բայց եւ ակնարկ չկայ այնտեղ մամլուքեան կառավարչութեան մասին:

Ինչեւիցէ, առաջ անցնելով նշենք, որ Մալաթիայի գրաւումից յետոյ մամլուքեան իշխանութիւնների ոտնձգութիւնները սուլթանութեան հիւսիսային սահմաններին յարակից բնակավայրերի դէմ շարունակուեցին: Դրանցից մէկը տեղի ունեցաւ վերոնկարագրեալ դէպքերից ընդամէնը մի քանի ամիս անց: Վերեւում արդէն խօսել ենք, որ մամլուքների Մելիտինէն արշաւելու նպատակներից մէկը քուրդ Մանդուհին բռնելն էր, ով, ըստ Աբու ալ Ֆիդայի, «Արաքնի բերդի տէրն էր»: Վերջինս, սակայն, ինչպէս գիտենք, մամլուքեան զօրքի՝ կապաններն անցնելուց առաջ յաջողացրել էր փախչել: Բայց Ալ Մալիք ալ Նասիրը Մանդուհին բռնելու իր նպատակից չէր հրաժարուել: Ալ Նուվայրի պատմիչը գրում է. «Այս տարուայ Շաբան ամսի սկզբին (1315 թ. նոյեմբեր) Հալէպեան զօրքից մի զօրագունդ՝ էմիր

123 *Ḥamd Allāh Mustawfī Qazwīnī, Kitāb Nuzhat al-qulūb*, Barī, Laydan, 1913, ք. 98-99, ինչպէս նաեւ *The geographical part of the Nuzhat-al-Qulūb composed by Ḥamd-allāh Mustawfī of Qazwīn in 740 (1340)*, tr. by G. Le Strange, E. J. Brill, Leiden-London, 1919, pp. 98-99.

Նասիր ալ Դին ալ Այնթաբիի գլխավորութեամբ, շարժուեց Աֆկին բերդը պաշարելու, որը Ամիրի մերձակայքի բերդ է, որը գրաւեցին առանց կռուի: Սպանուեց Մանդուկի եղբայրը, ում գլուխը կտրեցին եւ կախեցին բերդի դարպասից: Այս արշաւի նպատակը Մանդուկին բռնելն էր, ում [սակայն] այնտեղ չգտան: Զօրքը յարձակումներ գործեց մի շարք քրդական գիւղերի եւ շէնքերի վրայ: Ասում էին, որ աւարի մէկ հինգերորդ մասը կազմում էր հինգ հազար գլուխ ոչխար եւ 25 հարճ»¹²⁴: Այս դէպքերի մասին պատմում է նաեւ Ալ Բիրզալին, ով, ի տարբերութիւն Աբու ալ Ֆիդայի եւ Ալ Նուվայրիի, բերդն անուանում է Արակնիյեա՝ որոշ արժէքաւոր մանրամասներ հաղորդելով: Ըստ նրա՝ մամլուքեան այրուձիթ թուաքանակը եղել է մօտ 5 հազար: «Զօրքն արշաւեց քրդերի եւ հայերի մի շարք գիւղերի վրայ, գրում է նա, եւ [անխնայ] աւարառութեան ենթարկեց: Նրանք ողջ ու առողջ Հալէպ դարձան Ռամադան ամսի սկզբներին (1315 թ. դեկտեմբեր): Այս արշաւանքի նպատակն այդ բերդում Մանդուկին բռնելն էր, ում [սակայն] այնտեղ չգտան, ինչպէս նաեւ Զարմուկ բերդը գրաւելը, որ մօտ էր Խարթբերդին (իմա՝ Խարբերդ – Գ. Դ.) եւ Քարքարին, նրա կառավարչի հետ գաղտնի համաձայնութեամբ, ով [սակայն] իր համաձայնութիւնը չտուեց»¹²⁵: Իբն ալ Վարդի պատմիչը նոյնպէս գրում է այս արշաւանքի մասին եւ Ալ Բիրզալիի պէս բերդն անուանում է Արակնիյեա¹²⁶:

Իր *al-Nafha al-miskiyya* երկում արշաւանքին հարեւանցի անդրադառնում է նաեւ Իբն Դուլմակը, ով բերդը Արաֆչա է

124 Al-Nuwayri, *Nihāya*, ց. 32, ք. 172.
 125 Al-Birzālī, *al-Muqtafi*, ց. 4, ք. 199-200: Հմմտ. al-Dahabī, *Duwal al-Islām*, ց. 2, bi-tahqīq Ḥasan Ismā‘īl Marwa, *Dār Šādīr*, Bayrūt, 1999, ք. 249:
 126 Ibn al-Wardī, *Tatimmat al-Muḥtaṣar*, ց. 2, ք. 263.

անուանում¹²⁷: Նրա միւս երկում՝ *al-Ğawhar al-ğamīn*-ում, տեղանունն արձանագրուած է *‘Irqiyya* ձեւով¹²⁸: Շարունակելով վերելում սկսած քննարկումը՝ փորձենք պարզել, թէ որն է պատմիչների երկերում Արաքնի, Արակնիյեա, Աֆկին, Արաֆչա, Իրկիյեա անուններով յիշուած բերդը եւ դրա տեղագրութիւնը: Կարող է տպաւորութիւն ստեղծուել, թէ յիշեալ անուանումներն աղաւաղուած տառադարձումներն են Արաքիւր տեղանունն, որը գտնւում էր Մալաթիայից հիւսիս՝ մօտ 70 կմ հեռավորութեան վրայ: Բայց արաբագիր հեղինակների (մասնաւորապէս՝ Ալ Նուվայրիի եւ Ալ Բիրզալիի) այն տեղագրական ճշգրտումը, թէ բերդը գտնւում էր Ամիրի (Տիգրանակերտ, Դիարբեքիր) մերձակայքում, եզրայանգման գիծը լրիւ այլ ուղղութեամբ է տանում: Մեր կարծիքով՝ խօսքն, ամենայն հաւանականութեամբ, Արկնիի (հայկական մատենագրութեան մէջ կոչուած նաեւ Արհնի, Արկանա, Արղանա, Արղընի, Արղն եւ այլն)¹²⁹ մասին է, որն Ամիրի հիւսիսարեւմտեան կողմում էր՝ նրա եւ Մալաթիայի միջեւ¹³⁰:

127 Ibn Duqmaq, *Al-Nafha al-miskiyya fi al-dawla al-turkiyya min kitāb al-Ğawhar al-ğamīn, bi-tahqīq ‘Umar ‘Abd al-Salām Tadmūrī, al-Maktaba al-‘Asriyya, Šaydā-Bayrūt*, 1999, ք. 123-124.
 128 Նոյնի՝ *al-Ğawhar al-ğamīn fi siyar al-ḥulafā’ wa-l-mulūk, bi-tahqīq Sa‘īd ‘Abd al-Fattāh ‘Ašūr, Ğāmi‘at Umm al-Qurā, Makka*, 1982, ք. 350.
 129 Տե՛ս, օրինակ, Մատթէոս Ուոհայեցի, *Ժամանակագրութիւն*, գրաքար բնագիրը Մ. Մելիք-Արամեանի եւ Ն. Տէր-Միքայէլեանի, աշխարհաբար թարգ.՝ Լ. Բարթիկեանի, Երեւան, 1991, էջ 120-124. Սմբատայ Սպարապետի *Տարեգիրք*, աշխատասիրութեամբ Լ. Սերովբէ Ազըլեանի, Վեմետիկ, 1956, էջ 48:
 130 Տե՛ս Լ. Ս. Էփրիկեան, *Պատկերագրող բնաշխարհիկ բառարան*, Բու. Ա. (Ա-Ը), Վեմետիկ, Սուրբ Ղազար, 1902, էջ 297-298. Թ. Խ. Յակոբեան, Սու. Տ. Մելիք-Բախշեան, Թ. Խ. Բարսեղեան, *Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան*, Բու. 1 (Ա-Գ), Երեւան, 1988, էջ 456. T. A. Sinclair, *Eastern Turkey*, vol. III, p. 265.

Բերդամրոցի բնակչութեան մեծամասնութիւնը, փաստօրէն, հայեր ու քրդեր էին, իսկ քրդազգի Մանդուկն կամ Մանդուհը բերդի տէրն էր: Ալ Բիրզալիի յիշատակած Զերմուկը (կամ Զերմիկ, Զերմիկ եւ այլն) նոյնպէս Ամիրի նահանգի բնակավայր էր՝ Արակնիից ոչ շատ հեռու (մօտ 30 կմ)¹³¹: Այսպէս, անյաջողութեամբ աւարտուեց Մանդուհին ձերբակալելու եւս մի փորձ, չնայած որ մամլուքեան հրոսակների վրէժխնդրութեան զոհ դարձաւ նրա եղբայրը, եւ աւարառութեան ենթարկուեցին Ամիրի շրջանի մի շարք քրդաբնակ ու հայաբնակ բնակավայրեր:

Ինչպէս երեւում է, Արկնիի եւ Զերմուկի արշաւանքից յետոյ մամլուքների կողոպտչական յարձակումները Մալաթիայի շրջակայքի հայաբնակ եւ քրդաբնակ բնակավայրերի վրայ շարունակուել են: Արաբագիր պատմիչները խօսում են 1315 թ. մամլուքների եւս մի արշաւանքի մասին, որի թիրախը Մալաթիայի արեւելեան կողմում գտնուող հիմնականում հայաբնակ Դարանդան էր (Տարանդա): Իբն Հաբիբն այս մասին գրում է. «[Այս թուականին] Հալէպեան բանակի մի զօրախումբ, սուլթանական հրամանի համաձայն, ճամփայ ընկաւ Դարանդա (Dāranda) բերդը գրաւելու: Երբ այնտեղ հասան, պաշարեցին այն եւ գրաւեցին ուժով: Սպանեցին այնտեղ եղած հայերին՝ մօտ հազար հոգու, աւերեցին այդ ամրոցը, աւար առան այնտեղ եղած հարստութիւնները, գերեզմանները կանանց ու երեխաներին եւ ողջ-աւողջ հետ դարձան»¹³²:

Ահա այսպիսի ընթացք եւ հետեւանքներ ունեցաւ Մալաթիայի 1315 թ. արշաւանքը: Այն ոչ միայն պատճառ դարձաւ

131 Թ. Խ. Յակոբեան, Սու. Տ. Մելիք-Բախշեան, Թ. Խ. Բարսեղեան, *Աշխարհագրագիտական քարտեզներ*, vol. III, pp. 260-261.
 132 Տե՛ս Ibn Ḥabīb, *Tagkirat al-nabīh*, ց. 2, ք. 68, ինչպէս Գաւրի Մուֆաճճալ, *al-Nahğ al-sadiq*, ք. 760 [254]:

քաղաքի աւերածութեան, հայ բնակչութեան կոտորածի եւ գերեզմանութեան, այլեւ անդառնալի հետեւանքներ ունեցաւ հայոց թագաւորութեան համար: Թէեւ հայոց արքայ Օշինին յաջողուեց խուսափել մամլուքների ներխուժումից եւ տարածքային կորուստներից, այնուամենայնիւ, Մամլուքեան սուլթանութեան պարտադրած նոր հարկաչափը ծանր հարուած եղաւ երկրի տնտեսութեանը: Մամլուքների գործողութիւնները Կիլիկեան Հայաստանի նկատմամբ աւելի անզուսպ դարձան յատկապէս 1320-ական թուականներին: Արդէն 1320 եւ 1322 թուականներին Կիլիկեան Հայաստանը ոչ միայն չխուսափեց մամլուքների աւերիչ ներխուժումից (իսկ երկրորդ դէպքում՝ նաեւ տարածքային կորուստներից), այլեւ ստիպուած եղաւ էլ աւելի ծանր հարկ վճարել սուլթանութեանը՝ 1.200.000 դիրհամ¹³³: Սուլթան Ալ Մալիք ալ Նասիրը ձեռքերի լիակատար ազատութիւն ստացաւ յատկապէս 1323 թ. յետոյ, երբ երկար բանակցութիւնների արդիւնքում նա եւ Իրանի մոնղոլ իլխան Աբու Սաիդը (1316-1335 թթ.) հաշտութիւն կայացրին: Աւելի քան 60-ամեայ հակամարտութիւնից յետոյ երկու տէրութիւնների միջեւ խաղաղութիւն հաստատուեց: Այժմ արդէն մամլուքեան իշխանութիւնների ուշադրութեան կիզակէտում էր յատկապէս Այաս նաւահանգիստը՝ «անօգնական ու անդաշնակից» մնացած հայոց թագաւորութեան կենսունակութեան վերջին կողաններից մէկը:

133 Մամլուքեան սուլթանութեանը հայոց թագաւորութեան վճարած հարկաչափերիմ եւ հայոց արքաների կողմից մամլուքեան սուլթանների պարբերաբար ուղարկուող թանկարժէք ընծաներիմ առանձին յօդուած կը նուիրենք մօտ ապագայում: